# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

## ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԻ ԿՈՂՄԻՑ, ԵՎ ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ՝ ՄՅՈՒՍ ԿՈՂՄԻՑ, ՄԻՋԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

### ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետությունը, Բելառուսի Հանրապետությունը, Ղազախստանի Հանրապետությունը, Ղրղզստանի Հանրապետությունը, Ռուսաստանի Դաշնությունը (այսուհետ՝ ԵԱՏՄ անդամ պետություններ) և Եվրասիական տնտեսական միությունը (այսուհետ՝ ԵԱՏՄ)՝ մի կողմից, և Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունը (այսուհետ՝ Չինաստան)՝ մյուս կողմից,

ԸՆԴՈՒՆԵԼՈՎ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների և Չինաստանի միջև ձևավորված երկարատև բարեկամությունն ու տնտեսական և առևտրային ամուր հարաբերությունները, ցանկանալով ամրապնդել իրենց համատեղ գործընկերությունը,

ՑԱՆԿԱՆԱԼՈՎ Կողմերի միջև ստեղծել միջավայր ու պայմաններ առևտրային փոխհարաբերությունների զարգացման և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում տնտեսական համագործակցության խթանման համար,

ԸՆԴՈՒՆԵԼՈՎ Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում և Եվրասիայում տնտեսական ինտեգրման կարևորությունն ու Եվրասիական տնտեսական միության և «Գոտու և Ճանապարհի» նախաձեռնության համակցման կարևորությունը՝ որպես տարածաշրջանում ամուր ու կայուն առևտրային հարաբերությունների ստեղծման միջոց,

ՀԱՍՏԱՏԵԼՈՎ ազգային քաղաքականության նպատակների իրագործման համար կարգավորումներ իրականացնելու իրենց իրավունքը և պահպանելով հանրության բարեկեցության ապահովման հարցում իրենց ճկունությունը,

**ՀԱՄԱՁԱՅՆԵՑԻՆ** հետևյալի մասին.

## ԳԼՈՒԽ 1

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

### Հոդված 1.1

**Ընդհանուր դրույթներ և սահմանումներ**

Սույն Համաձայնագրի նպատակներով, եթե այլ բան նախատեսված չէ.

(a) **«Գյուղատնտեսության մասին համաձայնագիր»** նշանակում է՝ Գյուղատնտեսության մասին համաձայնագիր՝ ԱՀԿ համաձայնագրի 1A հավելվածի համաձայն.

(b) **«Պաշտպանական միջոցների մասին համաձայնագիր»** նշանակում է՝ Պաշտպանական միջոցների մասին համաձայնագիր՝ ԱՀԿ համաձայնագրի 1A հավելվածի համաձայն.

(c) **«Հակագնագցման միջոցների մասին համաձայնագիր»** նշանակում է՝ Սակագների և առևտրի 1994 թվականի գլխավոր համաձայնագրի VI հոդվածի իրականացման մասին համաձայնագիր՝ ԱՀԿ համաձայնագրի 1A հավելվածի համաձայն.

(d) **«Մաքսային գնահատման մասին համաձայնագիր»** նշանակում է՝ Սակագների և առևտրի 1994 թվականի գլխավոր համաձայնագրի VII հոդվածի իրականացման մասին համաձայնագիր՝ ԱՀԿ համաձայնագրի 1A հավելվածի համաձայն.

(e) **«օրեր»** նշանակում է՝ օրացուցային օրեր՝ ներառյալ հանգստյան և ոչ աշխատանքային օրերը.

(f) **«Եվրասիական տնտեսական հանձնաժողով»** նշանակում է՝ ԵԱՏՄ մշտական գործող կարգավորման մարմինը, որն հիմնադրվել է «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի (այսուհետ՝ ԵԱՏՄ մասին պայմանագիր) համաձայն.

(g) **«ՍԱԳՀ 1994»** նշանակում է՝ Սակագների և առևտրի 1994 թվականի գլխավոր համաձայնագիր ու դրա մեկնաբանող ծանոթագրություններ՝ ԱՀԿ համաձայնագրի 1A հավելվածի համաձայն.

(h) **«Կողմեր»** նշանակում է՝ մի կողմից՝ ԵԱՏՄ՝ ԵԱՏՄ մասին պայմանագրից բխող իր իրավասության ոլորտներում, և/կամ ԵԱՏՄ անդամ պետություններ, և մյուս կողմից՝ Չինաստան.

(i) **«ԼՓՄ համաձայնագիր»** նշանակում է՝ Լրավճարների և փոխհատուցման միջոցների մասին համաձայնագիր՝ ԱՀԿ համաձայնագրի 1A հավելվածի համաձայն.

(j) **«ՍԲՍ համաձայնագիր»** նշանակում է՝ Սանիտարական և բուսասանիտարական միջոցների կիրառման մասին համաձայնագիր՝ ԱՀԿ համաձայնագրի 1A հավելվածի համաձայն.

(k) **«ԱՏԽ համաձայնագիր»** նշանակում է՝ Առևտրի տեխնիկական խոչընդոտների մասին համաձայնագիր՝ ԱՀԿ համաձայնագրի 1A հավելվածի համաձայն.

(l) **«ԹՐԻՓՍ համաձայնագիր»** նշանակում է՝ Մտավոր սեփականության իրավունքների՝ առևտրին առնչվող հայեցակետերի մասին համաձայնագիր՝ ԱՀԿ համաձայնագրի 1C հավելվածի համաձայն.

(m) **«ԱՀԿ համաձայնագիր»** նշանակում է՝ Առևտրի համաշխարհային կազմակերպության ստեղծման մասին 1994 թվականի ապրիլի 15-ի՝ Մարաքեշի համաձայնագիր.

(n) **«ԱՀԿ»** նշանակում է՝ Առևտրի համաշխարհային կազմակերպություն՝ ստեղծված ԱՀԿ համաձայնագրի համաձայն:

## Հոդված 1.2

## Սույն Համաձայնագրի նպատակը

Սույն Համաձայնագրի նպատակը Կողմերի միջև տնտեսական հարաբերությունների հետագա զարգացման համար հենք ստեղծելն է սույն Համաձայնագրով կարգավորվող ոլորտներում համագործակցության ապահովման և սույն Համաձայնագրով կարգավորվող հարցերի առնչությամբ Կողմերի միջև հաղորդակցության դյուրացման միջոցով:

## Հոդված 1.3

## Տարածքային կիրառելիություն

Միայն սույն Համաձայնագրի իրականացման համար սույն Համաձայնագիրը կիրառվում է Կողմերից յուրաքանչյուրի ամբողջ մաքսային տարածքում:

## Հոդված 1.4

## Այլ համաձայնագրերի հետ կապը

1. Կողմերը վերահաստատում են միմյանց նկատմամբ իրենց իրավունքներն ու պարտավորությունները՝ ԱՀԿ համաձայնագրի, ինչպես նաև այն երկկողմ համաձայնագրերի համաձայն, որոնց կողմեր են ԵԱՏՄ անդամ պետությունը և Չինաստանը:

2. Սույն Համաձայնագրի որևէ դրույթի և ԱՀԿ համաձայնագրի որևէ դրույթի միջև հակասության դեպքում հակասության մասով գերակայում է ԱՀԿ համաձայնագրի դրույթը:

3. Սույն հոդվածի 2-րդ կետում նշված հակասության դեպքում Կողմերն անմիջապես խորհրդակցում են՝ փոխադարձաբար ընդունելի լուծում գտնելու նպատակով:

4. Եթե երկկողմ համաձայնագիրը, որի կողմերն են ԵԱՏՄ անդամ պետությունը և Չինաստանը, սույն Համաձայնագրով կարգավորվող հարցերի համար նախատեսում է առավել բարենպաստ մոտեցում, քան սույն Համաձայնագրով նախատեսված մոտեցումն է, գերակայում է այդ առավել բարենպաստ մոտեցման մասին դրույթը:

## Հոդված 1.5

## Խորհրդակցություններ

Սույն Համաձայնագրից ծագող ցանկացած վեճ Կողմերը լուծում են խորհրդակցությունների միջոցով՝ փոխադարձաբար ընդունելի լուծման հասնելու նպատակով:

## Հոդված 1.6

## Ազգերի առավել բարենպաստության մոտեցում

ՍԱԳՀ 1994-ի I հոդվածը և դրա մեկնաբանող ծանոթագրությունները, ինչպես նաև ԱՀԿ համաձայնագրին համապատասխան կիրառվող՝ ՍԱԳՀ 1994-ի I հոդվածով սահմանված մոտեցումը տրամադրելու պարտավորությունից ցանկացած բացառություն, ազատում և հրաժարում ինկորպորացվում է սույն Համաձայնագրում և կազմում է դրա մասը:

## Հոդված 1.7

## Ազգային մոտեցում

ՍԱԳՀ 1994-ի III հոդվածը և դրա մեկնաբանող ծանոթագրությունները, ինչպես նաև ԱՀԿ համաձայնագրին համապատասխան կիրառվող՝ ՍԱԳՀ 1994-ի III հոդվածով սահմանված մոտեցումը տրամադրելու պարտավորությունից

ցանկացած բացառություն, ազատում և հրաժարում ինկորպորացվում է սույն Համաձայնագրում և կազմում է դրա մասը։

## Հոդված 1.8

## Ներմուծման և արտահանման հետ կապված վճարներ ու ձևակերպումներ

ՍԱԳՀ 1994-ի VIII հոդվածը և դրա մեկնաբանող ծանոթագրությունները, ինչպես նաև ԱՀԿ համաձայնագրին համապատասխան կիրառվող՝ ՍԱԳՀ 1994-ի VIII հոդվածով սահմանված պարտավորությունից ցանկացած բացառություն, ազատում և հրաժարում ինկորպորացվում է սույն Համաձայնագրում և կազմում է դրա մասը։

## Հոդված 1.9

## Ընդհանուր բացառություններ

Պայմանով, որ համապատասխան միջոցները չեն կիրառվում այն կերպով, որը կնշանակեր կամայական կամ չարդարացված խտրականություն այն երկրների միջև, որտեղ առկա են նույն պայմանները, կամ միջազգային առևտրի քողարկված սահմանափում, սույն Համաձայնագրում ոչինչ չի կարող մեկնաբանվել այնպես, որ խոչընդոտի որևէ Կողմի կողմից այնպիսի միջոցների ընդունումը կամ իրականացումը, որոնք՝

(a) անհրաժեշտ են հասարակական բարոյականությունը պահպանելու համար.

(b) անհրաժեշտ են մարդկանց, կենդանիների կամ բույսերի կյանքի կամ առողջության պահպանման համար.

(c) կապված են ոսկու կամ արծաթի ներմուծման կամ արտահանման հետ.

(d) անհրաժեշտ են, որպեսզի ապահովվի համապատասխանությունն այն օրենքների կամ կարգավորումների հետ, որոնք անհամատեղելի չեն ՍԱԳՀ 1994-ի դրույթներին, ներառյալ նրանք, որոնք վերաբերում են մաքսային գործի իրականացմանը, ՍԱԳՀ 1994-ի II հոդվածի 4-րդ կետի և XVII հոդվածի համաձայն գործող մենաշնորհների իրականացմանը, արտոնագրերի, ապրանքային նշանների և հեղինակային իրավունքի պաշտպանությանը և շփոթեցնող գործելակերպերի կանխարգելմանը.

(e) կապված են կալանավորների աշխատուժով ստեղծված արտադրանքներին.

(f) կիրառվում են գեղարվեստական, պատմական կամ հնագիտական արժեք ունեցող ազգային հարստության պաշտպանության համար.

(g) առնչվում են սպառվող բնական ռեսուրսների պահպանությանը, եթե այդ միջոցներն իրականացվում են ներքին արտադրության կամ սպառման հետ կապված սահմանափակումների հետ համատեղ.

(h) ներառում են ներքին արտադրության նյութերի արտահանման նկատմամբ սահմանափակումներ, որոնք անհրաժեշտ են վերամշակման ներքին արդյունաբերության համար այդ նյութերի զգալի քանակությունն ապահովելու համար այն ժամանակաշրջաններում, երբ այդ նյութերի ներքին գները համաշխարհային գներից ավելի ցածր մակարդակի վրա են պահվում որպես կառավարության կողմից իրականացվող կայունացման ծրագրի մի մաս, պայմանով, որ նման սահմանափակումները չեն կիրառվի նման ներքին արդյունաբերության արտադրանքի արտահանման ծավալները մեծացնելու կամ տրամադրված պաշտպանության մակարդակն ավելացնելու համար և չեն շեղվի ՍԱԳՀ 1994-ի՝ խտրականության բացառման մասին դրույթներից.

(i) կարևոր նշանակություն ունեն այն ապրանքների ձեռքբերման կամ բաշխման համար, որոնք դեֆիցիտ են ընդհանրապես կամ կոնկրետ տեղական մակարդակով, պայմանով, որ ցանկացած այդպիսի միջոց

համապատասխանում է այն սկզբունքին, որ Կողմերն ունեն նման ապրանքների միջազգային առաքումից հավասար մասնաբաժին ստանալու իրավունք, և որ ՍԱԳՀ 1994-ի մյուս դրույթներին չհամապատասխանող ցանկացած այդպիսի միջոց դադարեցվում է, երբ դրա համար հիմք հանդիսացող պայմանները դադարում են գոյություն ունենալ:

### Հոդված 1.10

### Անվտանգության հետ կապված բացառություններ

Սույն Համաձայնագրում ոչինչ չպետք է մեկնաբանվի այնպես, որ՝

(a) որևէ Կողմից պահանջվի տրամադրել որևէ տեղեկություն, որի բացահայտումը համարվում է իր անվտանգության էական շահերին հակասող կամ

(b) որևէ Կողմի արգելի ձեռնարկել ցանկացած գործողություն, որը նա անհրաժեշտ է համարում իր անվտանգության էական շահերը պաշտպանելու համար, որոնք՝

i) վերաբերվում են տրոհվող նյութերի կամ այն նյութերի, որոնցից ստացվել են դրանք.

ii) վերաբերվում են զենքի, զինամթերքի և ռազմական տեխնիկայի առևտրին և այլ ապրանքների ու նյութերի այնպիսի առևտրին, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն իրականացվում է զինված ուժերին մատակարարելու համար.

iii) ձեռնարկվել են պատերազմի ժամանակ կամ միջազգային հարաբերություններում այլ արտակարգ իրավիճակների ժամանակ, կամ

(c) արգելի որևէ Կողմի ձեռնարկել Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության ներքո՝ միջազգային խաղաղության և

անվտանգության պահպանման համար ստանձնած իր պարտավորությունների կատարմանն ուղղված որևէ գործողություն:

## Հոդված 1.11

### Գաղտնի տեղեկատվության բացահայտում

Սույն Համաձայնագրի դրույթներով չի պահանջվում Կողմից գաղտնի տեղեկատվություն տրամադրել, որի բացահայտումը կխոչընդոտի օրենքի կատարմանը կամ որևէ այլ կերպով կհակասի հանրային շահին, կամ որը կարող է վնաս հասցնել պետական կամ մասնավոր առանձին ձեռնարկությունների իրավաչափ առևտրային շահերին:

## ԳԼՈՒԽ 2

## ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ

### Հոդված 2.1

### Նպատակը

Սույն գլխի նպատակը սույն Համաձայնագրով կարգավորվող հարցերին առնչվող ընդհանուր կիրառության միջոցների հրապարակման և կատարման հետ կապված արդյունավետ մեխանիզմներ և կարգավորման միջոցներ սահմանելն է:

### Հոդված 2.2

### Միջոցների հրապարակում

1. Յուրաքանչյուր Կողմ, իր համապատասխան օրենքների և կարգավորումների համաձայն, ապահովում է սույն Համաձայնագրով կարգավորվող բոլոր հարցերի մասով ընդհանուր կիրառության իր միջոցների, ներառյալ՝ այդպիսի միջոցների փոփոխությունների և սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո ուժի մեջ մտնող միջազգային համաձայնագրերի, որոնց կողմ է հանդիսանում, վերաբերյալ տեղեկատվության ժամանակին հրապարակումը կամ ազատ մատչելիության համար այլ հանրային հասանելիությունը, ներառյալ՝ էլեկտրոնային եղանակով: Հնարավորության դեպքում տեղեկությունն էլեկտրոնային եղանակով հասանելի է դարձվում պատասխանատու մարմինների՝ հանրամատչելի պաշտոնական կայքերում՝ հղում կատարելով այդպիսի միջոցի կիրառման և կատարման համար պատասխանատու մարմնին: Շահագրգիռ անձանց տրամադրվում է ոչ խտրական մատչելիություն այդպիսի միջոցների մասին տեղեկատվությանը, ներառյալ՝ անվճար մատչելի կայքի միջոցով՝ հնարավորության դեպքում:

2. Յուրաքանչյուր Կողմ հնարավորության սահմաններում՝ իր համապատասխան օրենքների և կարգավորումների համաձայն՝

(a) նախապես հրապարակում է սույն հոդվածի 1-ին կետի մեջ նշված ցանկացած միջոց, որը նախատեսվում է ընդունել, և

(b) շահագրգիռ անձանց և մյուս Կողմին ընձեռում է այդ միջոցների վերաբերյալ մեկնաբանություններ ներկայացնելու պատշաճ հնարավորություն:

3. Որևէ Կողմի կողմից ձեռնարկված՝ սահմանված և միատեսակ գործելակերպի շրջանակներում հարկային դրույքաչափի կամ ներմուծման հետ կապված այլ գանձման չափի բարձրացման հանգեցնող կամ ներմուծման կամ դրա համար վճարումների փոխանցման հետ կապված նոր կամ ավելի ծանր պահանջ, սահմանափակում կամ արգելք սահմանող ընդհանուր կիրառության որևէ միջոց չի կիրառվում մինչև այդ միջոցի պաշտոնական հրապարակումը:

## Հոդված 2.3

## Միջոցների կիրառում

1. Յուրաքանչյուր Կողմ սույն Համաձայնագրի գործողությանն առնչվող՝ ընդհանուր կիրառության իր բոլոր միջոցները կիրառում է միասնական, անաչառ և ողջամիտ կերպով:

2. Յուրաքանչյուր Կողմ պետք է ունենա կամ հնարավորինս շուտ ձևավորի դատական, արբիտրաժային կամ վարչական տրիբունալներ կամ ընթացակարգեր, *inter alia,* մաքսային հարցերին առնչվող վարչական միջոցի արագ վերանայման և ուղղման նպատակով: Նման տրիբունալները կամ ընթացակարգերը պետք է լինեն անկախ այն գերատեսչություններից, որոնց վերապահված է վարչական իրավունքի նորմերի կիրառումը, և նրանց որոշումները պետք է կատարվեն այդ գերատեսչությունների կողմից և կառավարեն դրանց պրակտիկան, եթե ներմուծողների կողմից բողոքներ ներկայացնելու համար սահմանված ժամկետում

բողոք չի ներկայացվում դատարան կամ ավելի բարձր ատյանի տրիբունալ՝ պայմանով, որ նման գերատեսչության կենտրոնական վարչակազմը կարող է քայլեր ձեռնարկել հարցի վերանայմանն այլ վարույթի միջոցով հասնելու համար, եթե առկա է հիմնավոր պատճառ՝ կարծելու, որ որոշումը հակասում է օրենքի սահմանված սկզբունքներին կամ իրական փաստերին:

3. Սույն հոդվածի 2-րդ կետի դրույթներով չի պահանջվում սույն Համաձայնագիրը կնքելու օրը Կողմի տարածքում գործող այնպիսի ընթացակարգերի վերացում կամ փոխարինում, որոնցով փաստացի նախատեսված է վարչական միջոցի անկողմնակալ և անաչառ վերանայում, եթե նույնիսկ նման ընթացակարգերը լիովին կամ պաշտոնապես անկախ չեն այն գերատեսչություններից, որոնց վերապահված է վարչական իրավունքի նորմերի կիրառումը: Պահանջի դեպքում այդպիսի ընթացակարգեր կիրառող ցանկացած Կողմ մյուս Կողմին տրամադրում է ամբողջական տեղեկություններ դրանց վերաբերյալ, որպեսզի այդ Կողմը կարողանա որոշել, թե արդյոք այդ ընթացակարգերը համապատասխանում են սույն կետի պահանջներին:

## Հոդված 2.4

## Միջոցների մասին ծանուցում և տեղեկության տրամադրում

1. Յուրաքանչյուր Կողմ պետք է ձգտի մյուս Կողմին ծանուցել ցանկացած այնպիսի միջոցի վերաբերյալ տեղեկության մասին, որն առաջին Կողմը համարում է, որ կարող է զգալիորեն ազդել սույն Համաձայնագրի գործողության վրա:

2. Եթե Կողմը համարում է, որ մյուս Կողմի՝ սույն Համաձայնագրով կարգավորվող հարցերին առնչվող ընդհանուր կիրառության միջոցը կարող է ազդել սույն Համաձայնագրի գործողության վրա, այդ Կողմն իրավունք ունի մյուս Կողմից պահանջելու տրամադրել մանրամասն տեղեկություն տվյալ միջոցի վերաբերյալ: Պահանջ ներկայացնող Կողմը տեղեկություններ տրամադրելու իր պահանջում տրամադրում է այդպիսի պահանջ ներկայացնելու գործնական

պատճառները:

3. Կողմի պահանջով մյուս Կողմը պետք է ընդունված կամ ընդունելու համար նախատեսված ընդհանուր կիրառության ցանկացած միջոցի վերաբերյալ ժամանակին տրամադրի անհրաժեշտ տեղեկություն և պատասխանի համապատասխան հարցերին: Սույն կետի համաձայն պահանջված տեղեկությունը պետք է տրամադրվի ոչ ուշ, քան պահանջն ստանալու օրվանից 45 օրվա ընթացքում՝ պատասխանող Կողմի պետական/պաշտոնական լեզվով:

4. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն պահանջված տեղեկությունը պետք է տրամադրվի գրավոր, անգլերեն կամ Կողմի պետական/պաշտոնական լեզվով՝ ի գիտություն կցելով անգլերեն թարգմանությունը:

5. Մի Կողմի տեղեկություն տրամադրելու պահանջը և մյուս Կողմի համապատասխան պատասխանը պետք է տրամադրվեն Կողմերի՝ սույն Համաձայնագրի 12.2-րդ հոդվածի համաձայն նշանակված կապի ապահովման կենտրոնների միջոցով:

6. Սույն Համաձայնագրի նպատակներով տեղեկությունը համարվում է սույն հոդվածի 1-ին և 3-րդ կետերի համաձայն տրամադրված, եթե Կողմի կողմից այն տրամադրվել է ԱՀԿ համաձայնագրով ստանձնած իր պարտավորություններին համապատասխան, կամ եթե համապատասխան տեղեկատվությունը հանրամատչելի է դարձվել, ներառյալ՝ համացանցում՝ իրավասու մարմնի պաշտոնական կայքի միջոցով:

## ԳԼՈՒԽ 3

## ԱՌԵՎՏՐԻ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

### Հոդված 3.1

### Ընդհանուր դրույթներ

Կողմերը հակագնագցման, փոխհատուցման և պաշտպանական միջոցներ կկիրառեն՝ համապատասխանաբար ՍԱԳՀ 1994-ի VI հոդվածի և XIX հոդվածի, Հակագնագցման միջոցների մասին համաձայնագրի, ԼՓՄ համաձայնագրի և Պաշտպանական միջոցների մասին համաձայնագրի դրույթների համաձայն:

### Հոդված 3.2

### Օրենքների և կարգավորումների վերաբերյալ տեղեկատվության փոխանակում

1. Կողմերը պետք է միմյանց տրամադրեն իրենց տարածքներում հակագնագցման, փոխհատուցման և պաշտպանական միջոցների ընդունումն ու կիրառումը կարգավորող՝ տվյալ պահին գործող իրենց օրենքներն ու կարգավորումները: Կողմերը պետք է միմյանց տեղեկացնեն այդ օրենքներում ու կարգավորումներում կատարված ցանկացած փոփոխության մասին ոչ ուշ, քան այդ փոփոխությունների ուժի մեջ մտնելուց 60 օր հետո:

2. Համարվում է, որ ԵԱՏՄ անդամ պետությունները կատարել են սույն հոդվածի 1-ին կետի դրույթները, եթե համապատասխան տեղեկությունը ԵԱՏՄ կողմից տրամադրվել է Չինաստանին:

## Հոդված 3.3

### Ծանուցումներ

Հակագնազգման, փոխհատուցման տուրքի կամ պաշտպանական միջոցների մասով քննություն նախաձեռնելու հնարավորությունը դիտարկող Կողմը պետք է ձգտի մյուս Կողմին տրամադրել այդպիսի քննություն նախաձեռնելու մասին գրավոր ծանուցում ոչ ուշ, քան քննությունը սկսելուց 15 օր առաջ:

## Հոդված 3.4

### Տեղեկատվության փոխանակում

1. Կողմերը պետք է ապահովեն տեղեկատվության ժամանակին փոխանակումը հակագնազգման, փոխհատուցման և պաշտպանական միջոցների ընդունման ու կիրառման ոլորտում, ներառյալ Կողմերի մեթոդաբանությունն ու փորձը, որպեսզի դյուրացնեն Կողմերի գործելակերպերի մասին փոխըմբռնումը:

2. Կողմերը պետք է կանոնավոր կերպով ապահովեն հակագնազգման, փոխհատուցման և պաշտպանական միջոցների ներդրման ու կիրառման միջազգային պրակտիկայի, ինչպես նաև դրա զարգացման վերաբերյալ տեղեկատվության և կարծիքների փոխանակում:

3. Յուրաքանչյուր Կողմ կարող է մյուս Կողմին գրավոր խնդրել տեղեկություն տրամադրել սույն գլխով կարգավորվող ցանկացած հարցի վերաբերյալ: Այդպիսի հարցումը պետք է ներառի դիմող Կողմի խնդրանքի պատճառները: Կողմերը պետք է ձգտեն հայցվող տեղեկությունը գրավոր տրամադրել հարցումն ստանալուց հետո ողջամիտ, սակայն 30 օրը չգերազանցող ժամկետում: Հայցվող տեղեկության տրամադրումը չպետք է կանխի Կողմերի կողմից հակագնազգման, փոխհատուցման տուրքի կամ պաշտպանական միջոցների մասով քննություն նախաձեռնելը և չպետք է խոչընդոտի այդ քննությունը:

## Հոդված 3.5

### Խորհրդակցություններ

Կողմերը կարող են խորհրդակցել սույն գլխով կարգավորվող ցանկացած հարցի վերաբերյալ: Այդ նպատակով Կողմը պետք է մյուս Կողմին տրամադրի խորհրդակցություններ անցկացնելու գրավոր հարցում: Խորհրդակցությունները պետք է տեղի ունենան հնարավորինս շուտ, սակայն ոչ ուշ, քան այդպիսի գրավոր հարցում ստանալուց 30 օր հետո: Այդպիսի խորհրդակցությունները չպետք է կանխեն Կողմերի կողմից հակագնագցման, փոխհատուցման տուրքի կամ պաշտպանական միջոցների մասով քննություն սկսելը և չպետք է խոչընդոտեն այդպիսի քննությունը:

## Հոդված 3.6

### Կոնտակտային տվյալների փոխանակում

1. Կողմերը պետք է սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ 30 օրվա ընթացքում, փոխանակեն Կողմերի՝ սույն գլխին համապատասխան համագործակցությանը մասնակցող՝ քննություն իրականացնող մարմինների և այլ իրավասու մարմինների անվանումների և կոնտակտների վերաբերյալ տեղեկությունը: Կողմերը միմյանց անհապաղ ծանուցում են քննություն իրականացնող մարմինների և այլ իրավասու մարմինների առնչությամբ կատարված ցանկացած փոփոխության մասին:

2. Համարվում է, որ ԵԱՏՄ անդամ պետությունները կատարել են սույն հոդվածի 1-ին կետի դրույթների պահանջները, եթե համապատասխան տեղեկությունը ԵԱՏՄ կողմից տրամադրվել է Չինաստանին:

## Հոդված 3.7

## 2-րդ գլուխը չկիրառելը

Սույն գլխի դրույթները չեն տարածվում սույն Համաձայնագրի 2-րդ գլխի կիրառման դեպքերում:

## Հոդված 3.8

## Լրավճարներին առնչվող հարցեր

1. Որևէ Կողմի պահանջով մյուս Կողմը ողջամիտ ժամկետում ներկայացնում է ԼՓՄ համաձայնագրի 25.3-րդ հոդվածի համաձայն կազմված՝ իր լրավճարային ծանուցագիրը: Եթե Կողմն ԱՀԿ անդամ չէ, Կողմը ներկայացնում է լրավճարային ծանուցագիրը, որի ձևաչափն ու բովանդակությունը նույնական են ԼՓՄ համաձայնագրի 25.3-րդ հոդվածով պահանջվող ձևաչափին ու բովանդակությանը:

Որևէ Կողմ կարող է մյուս Կողմի կողմից տրամադրված կամ տրամադրվող՝ լրավճարի բնույթի և շրջանակների մասին տեղեկություններ ստանալու համար գրավոր հարցում ներկայացնել: Նման հարցում ստացած Կողմն այդ տեղեկատվությունը տրամադրում է հնարավորինս կարճ ժամկետում ու համապարփակ կերպով և պետք է պատրաստ լինի նման խնդրանք ներկայացվելու դեպքում լրացուցիչ տեղեկություն տրամադրել հարցում ներկայացնող Կողմին:

2. Եթե որևէ Կողմ հիմքեր ունի համարելու, որ մյուս Կողմի կողմից տրամադրված կամ կիրառվող լրավճարը վնաս է հասցնում իր տեղական արդյունաբերությանը, զրոյացնում կամ խաթարում է դրա գործունեությունը կամ լուրջ վտանգ է ներկայացնում դրա համար ԼՓՄ համաձայնագրով սահմանված իմաստով, նման Կողմը կարող է մյուս Կողմի հետ խորհրդակցություններ անցկացնելու պահանջ ներկայացնել:

Խորհրդակցություններ անցկացնելու վերաբերյալ պահանջը ներառում է՝ (a) դիտարկվող լրավճարի առկայությանն ու բնույթին և (b) պահանջ ներկայացնող Կողմի տեղական արդյունաբերությանը հասցված վնասին կամ դրա շահերի զրոյացմանը կամ դրանց խաթարմանը, կամ դրանց սպառնացող լուրջ վտանգին առնչվող՝ առկա ապացույցների հիմնավորումը:

3. Սույն հոդվածի վերոնշյալ կետերում նշված խորհրդակցություններն անցկացվում են պահանջն ստանալուց հետո՝ 60 օրվա ընթացքում, եթե Կողմերն այլ համաձայնության չեն գալիս:

4. Սույն հոդվածը չի կիրառվում Գյուղատնտեսության մասին համաձայնագրի I հավելվածում նշված արտադրանքի համար նախատեսված լրավճարների նկատմամբ:

## ԳԼՈՒԽ 4
## ԱՌԵՎՏՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ

### Հոդված 4.1

### Նպատակները

Սույն գլխի նպատակներն են՝

(a) դյուրացնել Կողմերի միջև ապրանքների առևտուրը՝ կանխելով և վերացնելով առևտրի անհարկի խոչընդոտները, որոնք կարող են առաջանալ ստանդարտների, տեխնիկական կանոնակարգերի և համապատասխանության գնահատման ընթացակարգերի նախապատրաստման, ընդունման և կիրառման հետևանքով.

(b) ամրապնդել Կողմերի միջև համագործակցությունը, ներառյալ ստանդարտների, տեխնիկական կանոնակարգերի և համապատասխանության գնահատման ընթացակարգերի նախապատրաստման, ընդունման և կիրառման վերաբերյալ տեղեկատվության փոխանակումը.

(c) խթանել յուրաքանչյուր Կողմի ստանդարտների, տեխնիկական կանոնակարգերի և համապատասխանության գնահատման ընթացակարգերի մասին փոխըմբռնումը.

(d) ամրապնդել Կողմերի միջև համագործակցությունը՝ ստանդարտացման, հավատարմագրման և համապատասխանության գնահատման մասով միջազգային մարմինների գործունեության աշխատանքներում.

(e) սույն գլխի շրջանակներում արդյունավետ կերպով լուծել Կողմերի միջև առևտրի հետ կապված խնդիրները։

## Հոդված 4.2

### Սահմանումներ

Սույն գլխի նպատակներով կիրառվում են ԱՏԽ համաձայնագրի 1-ին հավելվածում շարադրված սահմանումները։

## Հոդված 4.3

### Կիրառման շրջանակը

1. Սույն գլուխը կիրառվում է Կողմերի բոլոր այն ստանդարտների, տեխնիկական կանոնակարգերի և համապատասխանության գնահատման ընթացակարգերի նկատմամբ, որոնք կարող են ուղղակիորեն կամ անուղղակիորեն ազդել Կողմերի միջև ապրանքների առևտրի վրա՝ բացառությամբ.

(a) պետական կառավարման մարմինների կողմից պետական կառավարման մարմինների արտադրության կամ սպառման պահանջների համար պատրաստված գնման մասնագրերի և

(b) սույն Համաձայնագրի 5-րդ գլխում սահմանված՝ սանիտարական և բուսասանիտարական միջոցների։

2. Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է այնպիսի ողջամիտ միջոցներ, որոնք իրեն կարող են հասանելի լինել այն տեղական կառավարման մարմինների և ոչ պետական մարմինների կողմից սույն գլխի դրույթների կատարումն իր տարածքում ապահովելու համար, որոնք պատասխանատու են ստանդարտների, տեխնիկական կանոնակարգերի և/կամ համապատասխանության գնահատման ընթացակարգերի պատրաստման, ընդունման և կիրառման համար։

Հոդված 4.4

ԱՏԽ համաձայնագրի ինկորպորացիան

Եթե սույն գլխում այլ բան նախատեսված չէ, Կողմերի միջև կիրառվում է ԱՏԽ համաձայնագիրը, և ինկորպորացվում է սույն Համաձայնագրում ու կազմում սույն Համաձայնագրի մասը:

Հոդված 4.5

Թափանցիկություն

1. Կողմերն ընդունում են ստանդարտների, տեխնիկական կանոնակարգերի և համապատասխանության գնահատման ընթացակարգերի պատրաստման, ընդունման և կիրառման առնչությամբ թափանցիկության կարևորությունը:

2. Եթե որևէ Կողմ, ԱՏԽ համաձայնագրի 2.9-րդ հոդվածի և/կամ 5.6-րդ հոդվածի համաձայն, ծանուցում է ներկայացնում, այն՝

(a) մյուս Կողմի և դրա շահագրգիռ անձանց համար սահմանում է առնվազն 60 օր տևողությամբ ժամկետ՝ մեկնաբանություններ կատարելու համար,

(b) գրավոր պահանջի դեպքում պահանջն ստանալուց հետո՝ 12 օրվա ընթացքում, մյուս Կողմին է տրամադրում առաջարկվող ցանկացած տեխնիկական կանոնակարգի և համապատասխանության գնահատման ընթացակարգերի տեքստը,

(c) հաշվի է առնում մեկնաբանությունների համար սահմանված ժամկետում մյուս Կողմի կամ նրա շահագրգիռ անձանց կողմից արված մեկնաբանությունները,

(d) պահանջի դեպքում մյուս Կողմին է ներկայացնում

տեղեկատվություն սույն կետի «c» ենթակետում նշված մեկնաբանությունները չընդունելու պատճառների մասին:

3. Եթե որևէ Կողմ, ԱՏԽ համաձայնագրի 2.10-րդ հոդվածի և/կամ 5.7-րդ հոդվածի համաձայն, ծանուցում է ներկայացնում, նա մյուս Կողմի գրավոր պահանջի դեպքում այդ պահանջն ստանալուց հետո՝ 5 օրվա ընթացքում, տրամադրում է ծանուցմամբ նախատեսված տեխնիկական կանոնակարգերի և/կամ համապատասխանության գնահատման ընթացակարգերի պատճենները:

4. Յուրաքանչյուր Կողմ մյուս Կողմի համար հասանելի է դարձնում սերտիֆիկացման հավատարմագրված/նշանակված մարմինների և փորձարկման լաբորատորիաների ցանկը, ինչպես նաև նրանց հավատարմագրման/նշանակման շրջանակի մասին տեղեկատվություն:

5. Յուրաքանչյուր Կողմ պետք է նախատեսի տեխնիկական կանոնակարգերի հրապարակման և դրանք ուժի մեջ մտնելու միջև ընկած ժամանակահատվածի ողջամիտ, սովորաբար առնվազն 6 ամիս տևողությամբ դադար՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Կողմերի համար ի հայտ են գալիս անվտանգության, առողջապահության, շրջակա միջավայրի պաշտպանության կամ ազգային անվտանգության հրատապ հիմնախնդիրներ, կամ առկա է դրանց ի հայտ գալու սպառնալիք, կամ երբ դա անարդյունավետ կարող է լինել այդպիսի տեխնիկական կանոնակարգերով նախատեսված օրինական նպատակներն ապահովելու համար:

6. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է ընդունված տեխնիկական կանոնակարգերի և համապատասխանության գնահատման ընթացակարգերի անհապաղ հրապարակումը կամ ապահովում է դրանց հասանելիությունն այնպես, որ մյուս Կողմի շահագրգիռ անձինք հնարավորություն ունենան ծանոթանալու դրանց:

Հոդված 4.6

Համագործակցություն

1. Յուրաքանչյուր Կողմ, մյուս Կողմի պահանջով, դրականորեն է դիտարկում ստանդարտների, տեխնիկական կանոնակարգերի և համապատասխանության գնահատման ընթացակարգերի մասով համագործակցության վերաբերյալ առաջարկությունները: Փոխադարձաբար սահմանված ժամկետների և պայմանների վրա հիմնված նման համագործակցությունը կարող է ներառել, սակայն չսահմանափակվել հետևյալ միջոցառումներով.

(a) համատեղ սեմինարներ՝ յուրաքանչյուր Կողմում ստանդարտների, տեխնիկական կանոնակարգերի և համապատասխանության գնահատման ընթացակարգերի վերաբերյալ փոխըմբռնումը բարելավելու նպատակով.

(b) վերապատրաստման նպատակով Կողմերի պաշտոնյաների փոխանակում.

(c) սույն գլխի շրջանակներում՝ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող արտադրանքին առնչվող շուկայի վերահսկողության միջոցառումների վերաբերյալ տեղեկատվության փոխանակում.

(d) գիտական և տեխնիկական ոլորտներում համագործակցություն՝ տեխնիկական կանոնակարգերի որակը բարելավելու նպատակով.

(e) միմյանց տեխնիկական կանոնակարգերի և ստանդարտների վերաբերյալ համեմատական ուսումնասիրություններ.

(f) չափագիտության, փորձարկումների, ստուգումների և սերտիֆիկացման ոլորտներում համագործակցության հնարավորությունների բացահայտում.

(g) ստանդարտների և համապատասխանության գնահատման ընթացակարգերի մշակման ու կիրառման մասով համապատասխան

միջազգային մարմինների գործունեության շրջանակում փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում համագործակցության ընդլայնում.

(h) առևտրի տեխնիկական խոչընդոտների հարցերով ԱՀԿ կոմիտեի (այսուհետ՝ ԱՀԿ/ԱՏԽ կոմիտե) և միջազգային կամ տարածաշրջանային այլ համապատասխան ֆորումների մակարդակով համակարգումը խթանելու նպատակով հաղորդակցության և համագործակցության ամրապնդում.

(i) յուրաքանչյուր Կողմում ստանդարտների, տեխնիկական կանոնակարգերի և համապատասխանության գնահատման ընթացակարգերի համար պատասխանատու մարմինների խրախուսում՝ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ համագործակցելու նպատակով:

2. Սույն հոդվածի 1-ին կետի իրականացումը պայմանավորված է Կողմերի համապատասխան միջոցների և համապատասխան օրենքների ու կանոնակարգերի առկայությամբ:

3. Կողմերը համաձայնում են փոխանակել ստանդարտների, տեխնիկական կանոնակարգերի և համապատասխանության գնահատման ընթացակարգերի, ներառյալ փորձարկումների, ստուգումների, սերտիֆիկացման, հավատարմագրման և չափագիտության վերաբերյալ տեղեկատվություն՝ այդ ոլորտներում համագործակցությունն ընդլայնելու նպատակով:

4. Կողմերը ձգտում են ստեղծել և պահպանել այնպիսի մեխանիզմներ, որոնց հիման վրա կարող է ապահովվել նրանց ստանդարտների, տեխնիկական կանոնակարգերի և համապատասխանության գնահատման ընթացակարգերի աստիճանական համապատասխանեցումը, *inter alia,* հետևյալ միջոցներով.

(a) այս ոլորտներում ընդունված միջազգային փաստաթղթերի, ներառյալ ԱՀԿ/ԱՏԽ կոմիտեի շրջանակներում մշակված փաստաթղթերի կիրառման խթանում,

(b) Կողմերի ազգային ստանդարտների առավել ներդաշնակեցում համապատասխան միջազգային ստանդարտներին՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դա տեղին չէ կամ անարդյունավետ է:

5. Որևէ Կողմ, մյուս Կողմի պահանջով, ուսումնասիրում է կոնկրետ ոլորտների կամ արտադրանքի խմբերի շուրջ համագործակցության վերաբերյալ առաջարկությունները սույն գլխի շրջանակներում:

6. Կոնկրետ ոլորտների կամ արտադրանքի խմբերի վերաբերյալ ստանդարտների, տեխնիկական կանոնակարգերի և համապատասխանության գնահատման ընթացակարգերի համապատասխանեցման հիման վրա Կողմերը կարող են դիտարկել համաձայնագրերի վերաբերյալ բանակցություններ նախաձեռնելու հարցը՝ առևտրի անհարկի խոչընդոտները վերացնելու միջոցով Կողմերի միջև ապրանքների առևտուրը դյուրացնելու նպատակով:

7. Եթե որևէ Կողմ պետական սահմանի անցման կետում արգելապահում է մյուս Կողմից արտահանված ապրանքներն այն պատճառով, որ բացակայում են այդ Կողմի տեխնիկական կանոնակարգ(եր)ին կամ համապատասխանության գնահատման ընթացակարգերին այդ ապրանքների համապատասխանությունը հավաստող անհրաժեշտ փաստաթղթերը, կամ ենթադրվում է, որ այդ ապրանքները չեն համապատասխանում այդ Կողմի տեխնիկական կանոնակարգ(եր)ին կամ համապատասխանության գնահատման ընթացակարգերին, արգելապահման պատճառների մասին անհապաղ ծանուցվում է ներմուծողը կամ ներմուծողի (փոխադրողի) ներկայացուցիչը:

## Հոդված 4.7

## Տեխնիկական խորհրդակցություններ

1. Եթե որևէ Կողմ համարում է, որ մյուս Կողմի համապատասխան տեխնիկական կանոնակարգը կամ համապատասխանության գնահատման ընթացակարգը ստեղծել է մյուս Կողմի տարածք իր կողմից իրականացվող

արտահանումների անհարկի խոչընդոտ, նա կարող է պահանջել, որ անցկացվեն տեխնիկական խորհրդակցություններ:

2. Պահանջ ստացած Կողմը պահանջը ստանալուց հետո՝ 60 օրվա ընթացքում, տեխնիկական խորհրդակցություններ է սկսում՝ փոխադարձաբար ընդունելի լուծում գտնելու նպատակով: Տեխնիկական խորհրդակցությունները կարող են անցկացվել Կողմերի կողմից փոխհամաձայնեցված ցանկացած եղանակով:

## Հոդված 4.8

## Տեղեկատվության փոխանակում

1. Եթե այլ բան նախատեսված չէ սույն գլխում, մի Կողմը մյուս Կողմի հարցմանը պատասխանում է ողջամիտ ժամկետում, որը սովորաբար չպետք է գերազանցի 60 օրը:

2. Կողմերը հնարավորության սահմաններում ձգտում են սույն գլխում նշված հարցերի առնչությամբ տեղեկատվությունը փոխանակել անգլերենով:

## Հոդված 4.9

## Կապի ապահովման կենտրոններ

1. Յուրաքանչյուր Կողմ նշանակում է կապի ապահովման կենտրոն կամ կապի ապահովման կենտրոններ, որոնք ստանձնում են սույն գլխի գործողությունը համակարգելու պատասխանատվությունը:

Կապի ապահովման այդպիսի կենտրոնների գործառույթները ներառում են.

(a) Կողմերի միջև համագործակցությունը՝ սույն գլխի 4.5-րդ հոդվածի համաձայն.

(b) տեղեկատվության փոխանակումը սույն գլխի շրջանակներում.

(c) համագործակցություն ծավալելու մասին հարցումների տրամադրումն ու ստացումը սույն գլխի շրջանակներում և համապատասխան պատասխանների տրամադրումը.

(d) խորհրդակցություններ անցկացնելու մասին հարցումների տրամադրումն ու ստացումը՝ սույն գլխի 4.7-րդ հոդվածի համաձայն, և համապատասխան պատասխանների տրամադրումը:

2. Յուրաքանչյուր Կողմ մյուս Կողմին տրամադրում է կապի ապահովման նշանակված կենտրոնի կամ կապի ապահովման կենտրոնների վերաբերյալ տեղեկատվություն, ներառյալ այնպիսի կոնտակտային տվյալներ, ինչպիսիք են կոնտակտային անձի (անձանց) անունը (անունները), հեռախոսահամարը (հեռախոսահամարները), ֆաքսի համարը (համարները) և էլեկտրոնային հասցեն (հասցեները):

3. Յուրաքանչյուր Կողմ մյուս Կողմին անհապաղ ծանուցում է իր՝ կապի ապահովման կենտրոն(ներ)ի ցանկացած փոփոխության կամ համապատասխան կոնտակտային անձի (անձանց) տվյալների ցանկացած փոփոխության մասին:

## ԳԼՈՒԽ 5

## ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԵՎ ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

### Հոդված 5.1

### Նպատակները

Սույն գլխի նպատակներն են.

(a) ընդլայնել համագործակցությունը՝ Կողմերի առևտրի վրա սանիտարական և բուսասանիտարական միջոցների բացասական ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով՝ միաժամանակ պաշտպանելով Կողմերի տարածքներում մարդկանց, կենդանիների կամ բույսերի կյանքը կամ առողջությունը և ճանաչելով Կողմերի՝ սանիտարական և բուսասանիտարական միջոցներն իրենց միջազգային պարտավորություններին համապատասխան ընդունելու և դրանց կատարումն ապահովելու իրավունքը.

(b) ամրապնդել սանիտարական և բուսասանիտարական միջոցների կիրառման ոլորտում Կողմերի կարգավորող համակարգերի մասին փոխըմբռնումը.

(c) ընդլայնել Կողմերի սանիտարական և բուսասանիտարական միջոցների ու կարգավորող համակարգերի թափանցիկությունը և

(d) ամրապնդել համագործակցությունը Կողմերի իրավասու մարմինների միջև սանիտարական և բուսասանիտարական միջոցների ոլորտում:

## Հոդված 5.2

### Կիրառման շրջանակը

Սույն գլուխը կիրառվում է Կողմերի բոլոր այն սանիտարական և բուսասանիտարական միջոցների նկատմամբ, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն կարող են ազդել Կողմերի միջև ապրանքների առևտրի վրա:

## Հոդված 5.3

### Սահմանումներ

Սույն գլխի նպատակներով կիրառվում են ԱՀԿ համաձայնագրի A հավելվածում շարադրված սահմանումները:

## Հոդված 5.4

### ԱՀԿ համաձայնագրի ինկորպորացիան

Եթե այլ բան նախատեսված չէ սույն գլխում, Կողմերի միջև կիրառվում է ԱՀԿ համաձայնագիրը և ինկորպորացվում է սույն Համաձայնագրում ու կազմում սույն Համաձայնագրի մասը:

## Հոդված 5.5

### Տեղեկատվության փոխանակում և թափանցիկություն

1. Կողմերն ընդունում են սանիտարական և բուսասանիտարական միջոցների մշակման ու կիրառման թափանցիկության կարևորությունը, *inter alia*, իրենց համապատասխան սանիտարական և բուսասանիտարական միջոցների վերաբերյալ ժամանակին տեղեկատվություն փոխանակելու միջոցով:

2. Եթե Կողմը ծանուցում է ՄԲՄ համաձայնագրի B հավելվածի 5 (b) կետի կամ 6 (a) կետի համաձայն, այդ Կողմը նման պահանջ ներկայացվելու դեպքում առաջարկվող կարգավորման օրինակները տրամադրում է պահանջ ներկայացրած Կողմին:

3. Յուրաքանչյուր Կողմ մյուս Կողմին տրամադրում է առնվազն 60 օր ժամկետ՝ առաջարկվող սանիտարական կամ բուսասանիտարական միջոցների վերաբերյալ մեկնաբանություններ կատարելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ առաջանում են առողջության պահպանման հետ կապված հրատապ խնդիրներ, կամ կա դրանք առաջանալու վտանգ:

4. Յուրաքանչյուր Կողմ հաշվի է առնում մյուս Կողմի մեկնաբանությունները և նման պահանջ ներկայացվելու դեպքում փորձում է պատասխանել այդ մեկնաբանություններին:

5. Եթե Կողմը պետական սահմանի անցման կետում արգելապահում է մյուս Կողմից արտահանված ապրանքներն այն պատճառով, որ դրանք համարվում են սանիտարական կամ բուսասանիտարական պահանջներին չհամապատասխանող ապրանքներ, արգելապահման պատճառները գրավոր տեղեկացվում են ներմուծողին կամ ներմուծողի (փոխադրողի) ներկայացուցչին:

6. Յուրաքանչյուր Կողմ, մյուս Կողմի գրավոր պահանջով, ձգտում է ժամանակին տեղեկատվություն տրամադրել սանիտարական և բուսասանիտարական միջոցներին առնչվող ցանկացած այնպիսի հարցի վերաբերյալ, որն առաջացել է կամ կարող է առաջանալ Կողմերի միջև երկկողմ առևտրի արդյունքում:

7. Կողմերը ձգտում են տեղեկատվություն փոխանակել անգլերենով:

### Հոդված 5.6

### Համագործակցություն

1. Կողմերը համաձայնում են համագործակցել սույն գլխի իրականացումը դյուրացնելու և համապատասխան համակարգերի մասին փոխըմբռնումն ամրապնդելու նպատակով: Այդ համագործակցությունը հիմնվում է փոխհամաձայնեցված ժամկետների և պայմանների վրա և կարող է ներառել, սակայն չի սահմանափակվում հետևյալով.

(a) սույն գլխի շրջանակում սանիտարական և բուսասանիտարական միջոցների վերաբերյալ տեղեկատվության փոխանակում.

(b) Կողմերի՝ սննդամթերքի անվտանգությանը, մարդու, կենդանիների կամ բույսերի կյանքին կամ առողջությանն առնչվող հարցերով զբաղվող իրավասու մարմինների միջև համագործակցության, հաղորդակցության և համակարգման խրախուսում՝ համապատասխան միջազգային կազմակերպությունների՝ ներառյալ Բույսերի պաշտպանության միջազգային կոնվենցիայի, Կոդեքս Ալիմենտարիուս հանձնաժողովի և Կենդանիների առողջության համաշխարհային կազմակերպության շրջանակներում.

(c) իրավասու մարմինների միջև փորձի փոխանակման վերաբերյալ վերապատրաստման ծրագրերի մշակում՝ Կողմերի կողմից սննդամթերքի անվտանգությունն ապահովելու և կենդանիների հիվանդությունների ու վնասատուների տարածումը կանխելու նպատակով իրականացված միջոցառումների մասին փոխըմբռնումը խորացնելու համար.

(d) տարածաշրջանային պայմաններին հարմարվելու հետ կապված հարցերի մասով համագործակցություն, ներառյալ Կողմերի՝ վնասատուներից կամ հիվանդություններից զերծ տարածքների և վնասատուների կամ հիվանդությունների տարածվածության ցածր մակարդակի ճանաչում.

(e) փորձի փոխանակման խրախուսում, *inter alia,* լաբորատոր փորձարկման մեթոդների, հիվանդությունների/վնասատուների վերահսկողության մեթոդների ու ռիսկերի վերլուծության մեթոդաբանության

մասով և

(f) Կողմերի՝ սանիտարական և բուսասանիտարական հարցերի համար ԱՀԿ համաձայնագրին համապատասխան հարցումներով զբաղվող կենտրոնների միջև համագործակցության և փորձի փոխանակման խրախուսում:

2. Կողմերը կարող են սանիտարական և բուսասանիտարական միջոցների մշակման ու կիրառման մասով հետագա համագործակցության շուրջ լրացուցիչ պայմանավորվածություններ ձեռք բերել:

## Հոդված 5.7

## Տեխնիկական խորհրդակցություններ

1. Եթե Կողմը համարում է, որ մյուս Կողմի սանիտարական կամ բուսասանիտարական միջոցը քողարկված սահմանափակում է ստեղծում իր՝ մյուս Կողմ արտահանման հետ կապված, նա կարող է պահանջել տեխնիկական խորհրդակցությունների անցկացում:

2. Պահանջ ստացած Կողմը պահանջն ստանալուց հետո՝ 60 օրը չգերազանցող ժամկետում, տեխնիկական խորհրդակցություններ է սկսում՝ փոխադարձաբար ընդունելի լուծում գտնելու նպատակով: Տեխնիկական խորհրդակցությունները կարող են անցկացվել Կողմերի կողմից փոխհամաձայնեցված ցանկացած եղանակով:

## Հոդված 5.8

## Կապի ապահովման կենտրոններ

1. Յուրաքանչյուր Կողմ նշանակում է կապի ապահովման կենտրոն կամ կապի ապահովման կենտրոններ, որոնք այդ Կողմի համար ստանձնում են սույն գլխի գործողությունը համակարգելու պատասխանատվությունը:

Կապի ապահովման այդ կենտրոնների գործառույթները ներառում են.

(a) համագործակցությունը՝ սույն գլխի 5.5-րդ հոդվածի համաձայն.

(b) խորհրդակցություններ անցկացնելու մասին հարցումների տրամադրումն ու ստացումը՝ սույն գլխի 5.7-րդ հոդվածի համաձայն.

(c) համագործակցություն ծավալելու մասին հարցումների տրամադրումն ու ստացումը սույն գլխի շրջանակներում և համապատասխան պատասխանների տրամադրումը:

2. Յուրաքանչյուր Կողմ մյուս Կողմին տրամադրում է նշանակված կապի ապահովման կենտրոնի կամ կապի ապահովման կենտրոնների վերաբերյալ տեղեկատվություն, ներառյալ այնպիսի կոնտակտային տվյալներ, ինչպիսիք են կոնտակտային անձի (անձանց) անունը (անունները), հեռախոսահամարը (հեռախոսահամարները), ֆաքսի համարը (համարները) և էլեկտրոնային հասցեն (հասցեները):

3. Յուրաքանչյուր Կողմ մյուս Կողմին անհապաղ ծանուցում է իր կապի ապահովման կենտրոնների ցանկացած փոփոխության կամ համապատասխան կոնտակտային անձի (անձանց) տվյալների ցանկացած փոփոխության մասին:

## ԳԼՈՒԽ 6

## ՄԱՔՍԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԵՎՏՐԻ ԴՅՈՒՐԱՑՈՒՄ

### Հոդված 6.1

### Սահմանումներ

Սույն գլխի նպատակներով՝

(a) **«նախնական որոշումներ»** նշանակում է՝ նախքան դիմումի մեջ նշված ապրանքի ներմուծումը Կողմի կողմից դիմումատուին տրամադրվող գրավոր որոշում, որով սահմանվում է ներմուծման ժամանակ Կողմի կողմից տվյալ ապրանքին տրամադրվող ռեժիմը՝ կապված ապրանքի սակագնային դասակարգման և ապրանքի ծագման հետ.

(b) **«մաքսային իրավունք»** նշանակում է՝ մաքսային իրավունք «Մաքսային ընթացակարգերի պարզեցման և ներդաշնակեցման մասին» միջազգային կոնվենցիայի (Կիոտոյի վերանայված կոնվենցիա) իմաստով.

(c) **«մաքսային տարածքում վերամշակում»** նշանակում է՝ մաքսային ընթացակարգ, որով որոշակի ապրանքներ կարող են բերվել Կողմի մաքսային տարածք՝ ներմուծման տուրքերի և հարկերի վճարումից լրիվ կամ մասնակի պայմանական ազատմամբ կամ տուրքի վերադարձի հնարավորությամբ՝ այն հիմքով, որ նման ապրանքները նախատեսված են արտադրության, վերամշակման կամ վերանորոգման և հետագայում արտահանման համար.

(d) **«տրանսպորտային միջոց»** նշանակում է՝ տարբեր տեսակի նավեր, տրանսպորտային միջոցներ, ներառյալ երկաթուղային տրանսպորտային միջոցները, օդանավեր, որոնք մուտք են գործում կամ դուրս են գալիս Կողմի տարածքից՝ փոխադրելով մարդկանց և/կամ ապրանքներ։

## Հոդված 6.2

## Կիրառման շրջանակը և նպատակները

1. Սույն գլուխը կիրառվում է մաքսային գործառնությունների և Կողմերի միջև ապրանքների առևտրին ու Կողմերի միջև տրանսպորտային միջոցների համապատասխան տեղաշարժին առնչվող այլ մաքսային հարցերի նկատմամբ։

2. Սույն գլխի նպատակներն են՝

(a) պարզեցնել Կողմերի մաքսային գործառնությունները,

(b) դյուրացնել Կողմերի միջև առևտուրը, ներառյալ ապրանքների բացթողումն ու մաքսազերծումն արագացնելով, սահմանի վրայով դրանց տեղաշարժը արագացնելու և Կողմերի՝ առևտրով զբաղվող անձանց կրած հարակից ծախսերը նվազեցնելու նպատակով,

(c) բարձրացնել Կողմերի մաքսային գործառնությունների թափանցիկությունն ու կանխատեսելիությունը և

(d) խթանել սույն գլխի շրջանակներում մաքսային համագործակցությունը։

## Հոդված 6.3

## Դյուրացում

1. Յուրաքանչյուր Կողմ միասնական, անաչառ և ողջամիտ կերպով կատարում է սույն գլխում նշված հարցերի վերաբերյալ իր՝ ընդհանուր կիրառության օրենքները և կարգավորումները՝ իրենց մաքսային գործելակերպը կանխատեսելի, հետևողական և թափանցիկ դարձնելու նպատակով։

2. Կողմերի միջև ապրանքների առևտրի ժամանակ կատարվող ծախսերը և անհարկի ձգձգումները նվազեցնելու նպատակով նրանք կիրառում են արդյունավետ, անհրաժեշտության դեպքում՝ միջազգային ստանդարտների, մասնավորապես՝ Համաշխարհային մաքսային կազմակերպության ստանդարտների և առաջարկվող

գործելակերպի վրա հիմնված մաքսային ընթացակարգեր:

3. Կողմերը ձգտում են պարբերաբար գնահատել իրենց մաքսային գործառնությունները՝ Կողմերի միջև առևտուրը դյուրացնելու նպատակով դրանք պարզեցնելու համար:

4. Կողմերը ձգտում են մաքսային հսկողությունը, ձևակերպումները և Կողմերի միջև ապրանքների առևտրի համատեքստում պահանջվող փաստաթղթերի թիվը սահմանափակել այնքանով, որքանով դա անհրաժեշտ է և նպատակահարմար՝ իրավական պահանջներին համապատասխանությունն ապահովելու նպատակով, այդպիսով հնարավորինս պարզեցնելով համապատասխան ընթացակարգերը:

5. Կողմերը կարող են փոխադարձաբար ճանաչել Կողմերի կողմից կիրառվող նույնականացման միջոցներն ու փաստաթղթերը, որոնք Կողմերի համար անհրաժեշտ են Կողմերի համաձայնեցրած պայմանների հիման վրա տարանցվող ապրանքների և տրանսպորտային միջոցների հսկողության համար:

## Հոդված 6.4

## Մաքսային արժեքի որոշում

Կողմերը սահմանում են Կողմերի միջև շրջանառվող ապրանքների մաքսային արժեքը՝ ԱՀԿ համաձայնագրի՝ ներառյալ «Մաքսային արժեքը որոշելու մասին» համաձայնագրի համապատասխան դրույթներին համապատասխան:

## Հոդված 6.5

## Սակագնային դասակարգում

Կողմերն իրենց միջև շրջանառվող ապրանքների նկատմամբ կիրառում են ապրանքների անվանացանկերը՝ «Ապրանքների նկարագրման և ծածկագրման ներդաշնակեցված համակարգի մասին» 1986 թվականի հունիսի 24-ի միջազգային

կոնվենցիայի հավելվածով սահմանված՝ Ներդաշնակեցված համակարգի (այսուհետ՝ Ներդաշնակեցված համակարգ) վերջին հրատարակության հիման վրա:

## Հոդված 6.6

## Ռիսկերի կառավարում

1. Յուրաքանչյուր Կողմ ընդունում կամ շարունակում է պահպանել ռիսկերի կառավարման համակարգ՝ մաքսային հսկողություն իրականացնելու նպատակով:

2. Յուրաքանչյուր Կողմ մշակում և իրականացնում է ռիսկերի կառավարման գործընթացն այնպես, որ հնարավոր լինի խուսափել կամայական կամ չարդարացված խտրականությունից կամ միջազգային առևտրի քողարկված սահմանափակումներից:

3. Յուրաքանչյուր Կողմ կենտրոնացնում է մաքսային հսկողությունը, և հնարավորության սահմաններում՝ սահմանային վերահսկողության մյուս համապատասխան միջոցները, բարձր ռիսկայնության բեռների նկատմամբ և արագացնում է ցածր ռիսկայնության բեռների բացթողումը: Կողմը կարող է նաև այդպիսի հսկողություն իրականացնելու նպատակով պատահականության սկզբունքով ընտրել բեռներ՝ որպես իր՝ ռիսկերի կառավարման գործընթացի մաս:

4. Յուրաքանչյուր Կողմ ռիսկի կառավարումն իրականացնում է համապատասխան ընտրողականության չափանիշի միջոցով կատարված ռիսկերի գնահատման հիման վրա: Այդ ընտրողականության չափանիշը կարող են ներառել, *inter alia*, Ներդաշնակեցված համակարգի ծածկագիրը, ապրանքների բնույթը և նկարագրությունը, ծագման երկիրը, այն երկիրը, որտեղից առաքվել էին ապրանքները, ապրանքների արժեքը, առևտրով զբաղվող անձանց՝ համապատասխանության մասին վկայող փաստաթղթերը և տրանսպորտային միջոցի տեսակը:

5. Սույն հոդվածի նպատակով Կողմերը ձգտում են խթանել փոխադրված ապրանքների և տրանսպորտային միջոցների վերաբերյալ նախնական տեղեկատվության տրամադրումը մաքսային մարմիններին:

## Հոդված 6.7

## Ապրանքների ժամանակավոր ներմուծում և մաքսային տարածքում վերամշակում

1. Յուրաքանչյուր Կողմ իր մաքսային իրավունքով նախատեսված կարգով թույլատրում է, որ ապրանքները բերվեն իր մաքսային տարածք՝ ներմուծման տուրքերի և հարկերի վճարումից լրիվ կամ մասնակի պայմանական ազատմամբ, եթե այդ ապրանքները բերվում են իր մաքսային տարածք հատուկ նպատակով, նախատեսված են որոշակի ժամանակահատվածում վերարտահանման համար և բնականոն արժեզրկումից ու օգտագործման հետևանքով մաշվածությունից բացի՝ որևէ այլ փոփոխության չեն ենթարկվել:

2. Յուրաքանչյուր Կողմ իր մաքսային իրավունքով նախատեսված կարգով թույլատրում է ապրանքների վերամշակումը:

## Հոդված 6.8

## Արագ փչացող ապրանքներ

1. Կողմերը ձգտում են ապահովել արագ փչացող ապրանքների արագացված մաքսազերծումը՝ պայմանով, որ ներմուծող Կողմի օրենքների և կարգավորումների բոլոր կարգավորող պահանջները պահպանվել են:

2. Արագ փչացող ապրանքների խուսափելի կորուստը կամ փչանալը կանխելու նպատակով և պայմանով, որ պահպանվել են բոլոր կարգավորող պահանջները, յուրաքանչյուր Կողմ նախատեսում է արագ փչացող ապրանքների բացթողում՝

(a) սովորական հանգամանքներում՝ հնարավորինս կարճ ժամկետների ընթացքում, և

(b) բացառիկ հանգամանքներում, երբ նպատակահարմար կլինի դա իրականացնել՝ մաքսային և այլ համապատասխան մարմինների աշխատանքային ժամերից դուրս:

3. Յուրաքանչյուր Կողմ համապատասխան առաջնահերթություն է տալիս արագ փչացող ապրանքներին, երբ պլանավորում է կատարել որևէ ուսումնասիրություն, որը կարող է պահանջվել:

### Հոդված 6.9

### Ապրանքների բացթողում

1. Յուրաքանչյուր Կողմ սահմանում է կամ շարունակում է կիրառել ապրանքների արդյունավետ բացթողմանն ուղղված պարզեցված մաքսային ընթացակարգեր՝ Կողմերի միջև առևտուրը դյուրացնելու նպատակով: Ավելի ստույգ՝ սույն կետը Կողմին չի պարտավորեցնում բաց թողնել ապրանքները, եթե բաց թողնելու հետ կապված իր պահանջները չեն պահպանվել:

2. Սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան՝ յուրաքանչյուր Կողմ ընդունում կամ շարունակում է պահպանել այնպիսի ընթացակարգեր, որոնք՝

(a) հնարավորություն են տալիս ապահովելու ապրանքների բացթողումը դրանց ժամանումից հետո հնարավորինս արագ ժամկետներում՝ պայմանով, որ պահպանվել են բոլոր մյուս կարգավորող պահանջները.

(b) նախատեսում են անհրաժեշտության դեպքում, մինչև ապրանքների ֆիզիկական ժամանումը, տեղեկություններն էլեկտրոնային եղանակով նախապես ներկայացնելու և մշակելու հնարավորություն՝ ապրանքները բաց թողնելն արագացնելու նպատակով, և

(c) թույլ են տալիս ներմուծողներին մինչև Կողմի՝ ներմուծմանն

առնչվող բոլոր պահանջները բավարարելը ապահովել ապրանքների բացթողումը, եթե ներմուծողը տալիս է բավարար ու արդյունավետ երաշխիքներ, և եթե որոշվել է, որ հետագա ուսումնասիրություն, ֆիզիկական զննում և ցանկացած այլ փաստաթղթի տրամադրում չի պահանջվում:

3. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ ապրանքները բաց թողնվեն մաքսային իրավունքին համապատասխանությունն ապահովելու համար անհրաժեշտ ժամկետից ոչ ուշ:

## Հոդված 6.10

## Մաքսային համագործակցություն

1. Կողմերի օրենքների ու կարգավորումների շրջանակում Կողմերի մաքսային մարմինները ձգտում են սույն գլխի գործողության հետ կապված հարցերում փոխանակվել իրենց փորձառությամբ:

2. Սույն գլխով կարգավորվող ոլորտներում մաքսային համագործակցությունը զարգացնելու նպատակով և հաշվի առնելով ԵԱՏՄ անդամ պետությունների և Չինաստանի միջև մաքսային հարցերի շուրջ առկա երկկողմ համաձայնագրերը՝ Կողմերը կարող են աշխատանքներ կատարել փոխադարձ օգնություն տրամադրելու վերաբերյալ հարցման ընթացակարգերի շուրջ պայմանավորվածություններ ձեռք բերելու ուղղությամբ:

## Հոդված 6.11

## Օժանդակ փաստաթղթեր ներկայացնելու պահանջ

1. Յուրաքանչյուր Կողմ ձգտում է ընդունել ապրանքների ներմուծման համար պահանջվող օժանդակ փաստաթղթերի՝ թղթային կամ էլեկտրոնային տարբերակների պատճենները:

2. Ներմուծող Կողմն արտահանող Կողմի մաքսային մարմիններին ներկայացված արտահանման հայտարարագրի բնօրինակը կամ պատճենը ներկայացնելը չի սահմանում որպես ապրանքները բաց թողնելու պարտադիր պահանջ:

## Հոդված 6.12

## Սերտիֆիկացնող մարմնի տվյալների մասին ծանուցում

Յուրաքանչյուր Կողմ, համապատասխանաբար, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության մաքսային գլխավոր վարչության միջոցով մյուս Կողմին տրամադրում է Կողմերի կողմից՝ ոչ արտոնյալ ծագման սերտիֆիկատներ տրամադրելու համար նշանակված մարմինների անվանումները և հասցեները, ինչպես նաև Կողմերի՝ ոչ արտոնյալ ծագման այդ սերտիֆիկատները ստուգելու լիազորությամբ օժտված մարմինների անվանումները և հասցեները: Այդ տեղեկություններում փոփոխություն տեղի ունենալու դեպքում Կողմերը հնարավորինս շուտ այդ մասին տեղեկացնում են միմյանց:

## Հոդված 6.13

## Մաքսային բրոքերներ

1. Կողմերն ապահովում են մաքսային բրոքերներին վերաբերող՝ իրենց օրենքների և կանոնակարգերի թափանցիկությունը:

2. Կողմերը չեն սահմանում ապրանքների մաքսային հայտարարագրման ժամանակ մաքսային բրոքերների ծառայություններից պարտադիր օգտվելու պահանջ:

## Հոդված 6.14

### Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառում

1. Մաքսային գործառնություններն իրականացնելու նպատակով յուրաքանչյուր Կողմ կիրառում է տեղեկատվական տեխնոլոգիաներ, եթե դա Կողմերի համար և առևտրի, մասնավորապես՝ ոչ թղթային եղանակով իրականացվող առևտրի հարցում ծախսերի առումով նպատակահարմար է ու արդյունավետ՝ հաշվի առնելով այս ոլորտում համապատասխան միջազգային կազմակերպությունների՝ ներառյալ Համաշխարհային մաքսային կազմակերպության արձանագրած զարգացումները:

2. Կողմերը հայտարարատուներին ապահովում են ապրանքներն էլեկտրոնային եղանակով հայտարարագրելու հնարավորությամբ:

## Հոդված 6.15

### «Մեկ պատուհանի» համակարգ

1. Կողմերը, իրենց միջազգային համաձայնություններին համապատասխան, պետք է ձգտեն մշակել և իրականացնել իրենց՝ «Մեկ պատուհանի» ազգային համակարգերը՝ առևտրի դյուրացմանը և մաքսային տեխնիկական միջոցների և գործելակերպի արդիականացմանն առնչվող միջազգային ստանդարտների ու լավագույն գործելակերպի համաձայն:

2. Կողմերը պետք է ձգտեն խթանել «Մեկ պատուհանի» ազգային համակարգերի միջև փոխգործելիությունը, ինչը թույլ կտա ստեղծել պայմաններ արտաքին առևտրային գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ էլեկտրոնային փաստաթղթերի ու տվյալների և մաքսային հսկողության արդյունքների փոխադարձ ճանաչման համար՝ սահմանների ինտեգրված կառավարման նպատակով: Այդ նպատակներով Կողմերը պետք է ձգտեն մշակել ինստիտուցիոնալ, իրավական և տեխնիկական հիմք՝ «Մեկ պատուհանի» ազգային համակարգերի միջև տեղեկատվության փոխանակումն ապահովելու համար:

3. Տեղեկատվության փոխանակումը «Մեկ պատուհանի» ազգային համակարգերի միջև պետք է հիմնված լինի ԵԱՏՄ-ի ինտեգրված տեղեկատվական համակարգի տեխնիկական ենթակառուցվածքի և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության «Կենտրոնական էլեկտրոնային պորտալ» հարթակի ենթակառուցվածքի օգտագործման վրա:

## Հոդված 6.16

## Սահմանների համակարգված կառավարում

Կողմերն ապահովում են, որ սահմանային վերահսկողության և ապրանքների ներմուծմանը, արտահանմանը և տարանցմանն առնչվող ընթացակարգերի իրականացման համար պատասխանատու իրենց մարմինները և գործակալությունները համագործակցեն միմյանց հետ և համակարգեն իրենց գործողությունները՝ առևտուրը դյուրացնելու նպատակով:

## Հոդված 6.17

## Լիազորված տնտեսավարող սուբյեկտների փոխադարձ ճանաչում

Յուրաքանչյուր Կողմ պետք է ձգտի ստեղծել Լիազորված տնտեսավարող սուբյեկտների (ԼՏՍ) ծրագիր և կարող է բանակցություններ սկսել ԼՏՍ փոխադարձ ճանաչման վերաբերյալ:

## Հոդված 6.18

## Մաքսային ենթակառուցվածքի զարգացում

Կողմերը պետք է ձգտեն աշխատել միմյանց հետ՝ նպատակ ունենալով զարգացնելու և արդիականացնելու մաքսային ենթակառուցվածքը, որը ներառում է մաքսային հսկողության տեխնիկական միջոցները, ինժեներական, ՏՏ,

հեռահաղորդակցության համակարգերը և Կողմերի սահմանակից սահմանային անցակետերում օգտագործվող օժանդակ սարքավորումները՝ հաշվի առնելով համապատասխան սահմանային անցակետերի ծանրաբեռնվածությունը:

## Հոդված 6.19

## Նախնական որոշումներ

1. Յուրաքանչյուր Կողմ ամբողջ անհրաժեշտ տեղեկատվությունը պարունակող գրավոր պահանջ ներկայացրած դիմումատուին ողջամիտ, հստակ սահմանված ժամկետում տրամադրում է նախնական որոշում:

Եթե Կողմը մերժում է նախնական որոշում տրամադրել, նա պետք է այդ մասին անհապաղ գրավոր ծանուցի դիմումատուին՝ ներկայացնելով համապատասխան փաստերը և իր որոշման հիմքը:

2. Կողմը կարող է մերժել դիմումատուին նախնական որոշում տրամադրելն այն դեպքում, երբ դիմումի մեջ բարձրացված հարցը՝

(a) արդեն իսկ քննվում է դիմումատուի գործի շրջանակներում որևէ պետական գերատեսչությունում, վերաքննիչ տրիբունալում, կամ դատարանում, կամ՝

(b) դրա վերաբերյալ արդեն կայացվել է որոշում որևէ վերաքննիչ տրիբունալի կամ դատարանի կողմից:

3. Նախնական որոշումը վավերական է այն տրամադրելուց հետո ողջամիտ ժամանակահատվածի ընթացքում, եթե չեն փոխվել տվյալ որոշման համար հիմք հանդիսացող օրենքը, փաստերը կամ հանգամանքները:

4. Այն դեպքում, երբ Կողմը վերացնում է նախնական որոշումը, փոփոխում կամ անվավեր է ճանաչում այն, նա պետք է դիմումատուին տրամադրի գրավոր ծանուցում՝ ներկայացնելով համապատասխան փաստերը և իր որոշման հիմքը: Կողմը կարող է հետադարձ ուժով վերացնել նախնական որոշումը, փոփոխել կամ

անվավեր ճանաչել այն միայն այն դեպքում, երբ որոշումը կայացվել է ոչ ամբողջական, ոչ ճիշտ, կեղծ կամ շփոթեցնող տեղեկատվության հիման վրա:

5. Կողմի կայացրած նախնական որոշումը պարտադիր է այդ Կողմի համար այդ որոշումը կայացնելու համար պահանջ ներկայացրած դիմումատուի մասով: Կողմը կարող է նախատեսել, որ նախնական որոշումը պարտադիր է դիմումատուի համար:

6. Յուրաքանչյուր Կողմ պետք է հրապարակի առնվազն հետևյալը.

(a) նախնական որոշումը ստանալու համար դիմումին ներկայացվող պահանջները՝ ներառյալ տրամադրվելիք տեղեկատվությունը և ձևաչափը.

(b) տեղեկատվություն ժամանակահատվածի մասին, որի ընթացքում տրամադրվելու է նախնական որոշումը, և

(c) տեղեկատվություն ժամանակահատվածի մասին, որի ընթացքում վավերական է նախնական որոշումը:

7. Յուրաքանչյուր Կողմ դիմումատուի գրավոր պահանջի հիման վրա վերանայում է նախնական որոշումը կամ նախնական որոշումը վերացնելու, փոփոխելու կամ անվավեր ճանաչելու մասին որոշումը:

8. Յուրաքանչյուր Կողմ պետք է ձգտի հանրությանը մատչելի դարձնել նախնական որոշումների վերաբերյալ ցանկացած տեղեկություն, որը նա համարում է այլ շահագրգիռ անձանց համար զգալի հետաքրքրություն ներկայացնող տեղեկություն՝ հաշվի առնելով առևտրային գաղտնիք պարունակող տեղեկությունները պաշտպանելու անհրաժեշտությունը:

### Հոդված 6.20

### Տեղեկատվության փոխանակում

1. Մաքսային հսկողությունն արագացնելու և դրա արդյունավետությունը բարձրացնելու, և օրինական առևտուրը դյուրացնելու նպատակով Կողմերը կարող

են ուսումնասիրել ԵԱՏՄ-ի և Չինաստանի մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների և շարժվող տրանսպորտային միջոցների վերաբերյալ տեղեկատվության էլեկտրոնային փոխանակման համաձայնագիր (այսուհետ՝ Տեղեկությունների էլեկտրոնային փոխանակման մասին համաձայնագիր) կնքելու հնարավորությունը:

2. Կողմերը կփորձեն ձեռք բերել ընդհանուր համաձայնություն փոխանակման տվյալների տարրերի վերաբերյալ և դրանից հետո կփորձեն հնարավորինս շուտ կնքել Տեղեկությունների էլեկտրոնային փոխանակման մասին համաձայնագիրը:

3. Եվրասիական տնտեսական հանձնաժողովը ԵԱՏՄ անունից կհամակարգի տեղեկությունների էլեկտրոնային փոխանակման համակարգի ստեղծումը և կդյուրացնի տեղեկատվության էլեկտրոնային փոխանակումը:

## Հոդված 6.21

## Հարցումներով զբաղվող կենտրոններ

1. Յուրաքանչյուր Կողմ պետք է նշանակի հարցումներով զբաղվող՝ մեկ կամ մեկից ավելի կենտրոններ՝ շահագրգիռ անձանց կողմից մաքսային հարցերի վերաբերյալ հարցումները ստանալու նպատակով, և նման հարցումների իրականացման ընթացակարգերի մասին տեղեկատվությունը պետք է հրապարակի համացանցում:

2. Կողմերը միմյանց փոխանցում են հարցումներով զբաղվող՝ նշանակված կենտրոնների վերաբերյալ տեղեկատվությունը:

## Հոդված 6.22

## Վերանայում և բողոքարկում

Յուրաքանչյուր Կողմ, իր օրենքների և կարգավորումների համաձայն,

ապահովում է, որ ներմուծողը, արտահանողը կամ որևէ այլ անձ, որի վրա ազդում են մաքսային հարցերին առնչվող իր վարչական որոշումները, ունենա մատչելիություն՝

(a) որոշումները վարչական կարգով վերանայելու իր այն մաքսային մարմինների կողմից, որոնք վերադաս են կամ անկախ են վերանայվող որոշման համար պատասխանատու պաշտոնատար անձից կամ գրասենյակից, և

(b) որոշումները դատական կարգով վերանայելու՝ իր օրենքներին և կարգավորումներին համապատասխան:

## Հոդված 6.23

## Խորհրդակցություններ

1. Յուրաքանչյուր Կողմ կարող է ցանկացած ժամանակ սույն գլխի դրույթների կատարումից առաջացող ցանկացած հարցի վերաբերյալ մյուս Կողմի հետ խորհրդակցություններ պահանջել այն դեպքերում, երբ առկա են փաստեր կամ ողջամիտ հիմքեր, որոնք տրամադրել է հարցում ներկայացրած Կողմը:

2. Խորհրդակցությունները պետք է անցկացվեն սույն Համաձայնագրի 12.2-րդ հոդվածով սահմանված՝ կապի ապահովման համապատասխան կենտրոնների միջոցով և տեղի ունենան հարցումն ստանալուց հետո 60 օրվա ընթացքում կամ որևէ այլ հնարավոր ժամկետում, որը Կողմերը կարող են փոխադարձ համաձայնությամբ որոշել:

3. Այն դեպքում, երբ նման խորհրդակցությունների արդյունքում այդ հարցը չի լուծվում, հարցում ներկայացրած Կողմը կարող է հարցը հասցեագրել սույն գլխի 6.24-րդ հոդվածում նշված ենթակոմիտեին՝ հետագա քննարկման համար:

## Հոդված 6.24

## Մաքսային համագործակցության և առևտրի դյուրացման հարցերով ենթակոմիտե

1. Սույն գլխի դրույթների արդյունավետ կատարման նպատակներով սույնով ստեղծվում է Մաքսային համագործակցության և առևտրի դյուրացման հարցերով ենթակոմիտե (այսուհետ՝ ՄՀԱԴ հարցերով ենթակոմիտե), որը գործում է Համատեղ հանձնաժողովի ենթակայության ներքո:

2. ՄՀԱԴ հարցերով ենթակոմիտեն իրականացնում է հետևյալ գործառույթները.

(a) ապահովել սույն գլխի դրույթների պատշաճ իրականացումը և լուծել դրա կիրառման արդյունքում ի հայտ եկող բոլոր խնդիրները.

(b) գնահատել սույն գլխի դրույթների կատարումը սույն գլխին առնչվող՝ բարելավման ենթակա ոլորտները հայտնաբերելու համար՝ Կողմերի միջև առևտուրը դյուրացնելու նպատակով.

(c) Կողմերի միջև համագործակցությունն ամրապնդելու նպատակով փոխանակել յուրաքանչյուր Կողմի մաքսային ծառայության ռազմավարական զարգացման մասին տեղեկատվություն և

(d) առաջարկություններ կազմել ու ներկայացնել Համատեղ հանձնաժողովին:

3. ՄՀԱԴ հարցերով ենթակոմիտեն կազմված է Կողմերի մաքսային և շահագրգիռ մարմինների ներկայացուցիչներից: Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ ՄՀԱԴ հարցերով ենթակոմիտեն կարող է հրավիրել համապատասխան փորձագետներ՝ քննարկմանը մասնակցելու համար:

4. ՄՀԱԴ հարցերով ենթակոմիտեի նիստերն անցկացվում են Կողմերի կողմից համաձայնեցված ժամանակ և վայրում:

ԳԼՈՒԽ 7

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Հոդված 7.1

Նպատակները

Կողմերն ընդունում են հետազոտությունը, զարգացումը և ստեղծագործական գործունեությունը խթանելու նպատակով մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության ու կիրառման կարևորությունը, ինչը կնպաստի տնտեսական և սոցիալական զարգացմանը, ինչպես նաև գիտելիքի և տեխնոլոգիաների տարածմանը: Կողմերը նաև ընդունում են իրավատերերի և լայն հասարակության օրինական շահերի միջև հավասարակշռություն պահպանելու անհրաժեշտությունը:

Հոդված 7.2

Սահմանումներ

Սույն գլխի նպատակներով՝

(a) **«մտավոր սեփականություն»** նշանակում է՝ մտավոր սեփականության բոլոր կատեգորիաները, որոնք համարվում են սույն Համաձայնագրի 7.1-ին հոդվածից մինչև 7.27-րդ հոդվածի կարգավորման առարկան.

(b) **«քաղաքացիներ»** նշանակում է՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձինք, որոնց մշտական բնակության վայրը կամ իրական և գործող արդյունաբերական կամ առևտրային գործունեության վայրը Կողմերի մաքսային տարածքներում է.

(c) **«ՄՍՀԿ»** նշանակում է՝ Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն, որը ստեղծվել է 1967 թվականի հուլիսի 14-ի՝ Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպությունը հիմնադրող կոնվենցիայի համաձայն:

**Հոդված 7.3**

**Միջազգային համաձայնագրեր**

1. ԹՐԻՓՍ համաձայնագրի կողմ հանդիսացող Կողմերը վերահաստատում են այդ համաձայնագրով սահմանված իրենց պարտավորությունները: ԹՐԻՓՍ համաձայնագրի կողմ չհանդիսացող Կողմերը պետք է առաջնորդվեն ԹՐԻՓՍ համաձայնագրի սկզբունքներով: Կողմերը վերահաստատում են մտավոր սեփականության իրավունքների ոլորտում առկա միջազգային այն համաձայնագրերով սահմանված իրենց հանձնառությունները, որոնց կողմ են իրենք հանդիսանում, ներառյալ հետևյալները.

(a) 1967 թվականի Ստոկհոլմյան ակտով վերանայված՝ «Արդյունաբերական սեփականության պաշտպանության մասին» 1883 թվականի մարտի 20-ի Փարիզյան կոնվենցիա (այսուհետ՝ Փարիզյան կոնվենցիա).

(b) 1971 թվականի Փարիզյան ակտով վերանայված՝ «Գրական և գեղարվեստական երկերի պաշտպանության մասին» 1886 թվականի սեպտեմբերի 9-ի Բեռնի կոնվենցիա (այսուհետ՝ Բեռնի կոնվենցիա).

(c) «Հնչյունագրեր արտադրողների իրավունքներն իրենց հնչյունագրերի անօրինական պատճենահանումից պաշտպանելու մասին» 1971 թվականի հոկտեմբերի 29-ի կոնվենցիա.

(d) ՄՍՀԿ՝ «Հեղինակային իրավունքի մասին» 1996 թվականի դեկտեմբերի 20-ի պայմանագիր (այսուհետ՝ ՄՀԻՊ).

(e) ՄՍՀԿ՝ «Կատարումների և հնչյունագրերի մասին» 1996 թվականի դեկտեմբերի 20-ի պայմանագիր (այսուհետ՝ ՄԿՀՊ).

(f) «Նշանների միջազգային գրանցման մասին» 1891 թվականի ապրիլի 14-ի Մադրիդյան համաձայնագիր և «Նշանների միջազգային գրանցման մասին» Մադրիդյան համաձայնագրի՝ 1989 թվականի հունիսի 28-ի արձանագրություն.

(g) 2001 թվականի Վաշինգտոնի ակտով վերանայված՝ «Արտոնագրային համագործակցության մասին» 1970 թվականի հունիսի 19-ի պայմանագիր, և

(h) «Արտոնագրային գործընթացի նպատակով միկրոօրգանիզմների ավանդադրման միջազգային ճանաչման մասին» 1977 թվականի ապրիլի 28-ի Բուդապեշտի պայմանագիր:

2. Կողմերն ընդունում են «ԹՐԻՓՍ համաձայնագրի և հանրային առողջության մասին» 2001 թվականի նոյեմբերի 14-ին ԱՀԿ նախարարական համաժողովի կողմից ընդունված՝ Դոհայի հռչակագրում սահմանված սկզբունքները:

## Հոդված 7.4

## Ազգային մոտեցում

Յուրաքանչյուր Կողմ մյուս Կողմի քաղաքացիների համար ապահովում է իր քաղաքացիների համար ապահովվող մոտեցումից ոչ պակաս բարենպաստ մոտեցում՝ այն մտավոր սեփականության պաշտպանության առումով, որի վրա տարածվում են ԹՐԻՓՍ համաձայնագրի 3-րդ հոդվածով և 5-րդ հոդվածով սահմանված դրույթներն ու բացառությունները:

### Հոդված 7.5

### Ազգերի առավել բարենպաստության մոտեցում

Յուրաքանչյուր Կողմ մյուս Կողմի քաղաքացիների համար, ԹՐԻՓՍ համաձայնագրին համապատասխան, մտավոր սեփականության պաշտպանության առումով ապահովում է ցանկացած այլ երկրի քաղաքացիների համար ապահովվող մոտեցումից ոչ պակաս բարենպաստ մոտեցում:

### Հոդված 7.6

### Հեղինակային իրավունք և հարակից իրավունքներ

Չհակասելով այն միջազգային համաձայնագրերով սահմանված պարտավորություններին, որոնց կողմ են Կողմերը, յուրաքանչյուր Կողմ, իր համապատասխան օրենքների և կարգավորումների համաձայն հեղինակներին, կատարողներին, հնչյունագրեր արտադրողներին և հեռարձակող կազմակերպություններին տրամադրում և ապահովում է՝ համապատասխանաբար իրենց ստեղծագործությունների, կատարումների, հնչյունագրերի և հեռարձակումների առնչությամբ համարժեք ու արդյունավետ պաշտպանություն:

### Հոդված 7.7

### Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների պաշտպանության տեխնոլոգիական միջոցներ[1]

1. Յուրաքանչյուր Կողմ տրամադրում է համարժեք իրավական

[1] Սույն հոդվածի նպատակներով՝ «տեխնոլոգիական միջոցներ» նշանակում է՝ հեղինակների, կատարողների կամ հնչյունագրեր արտադրողների կողմից օգտագործվող ցանկացած տեխնոլոգիա, տեխնիկական սարք կամ դրա բաղադրիչներ, որոնցով վերահսկվում է աշխատանքներին, կատարումներին կամ հնչյունագրերին հասանելիությունը, և որոնցով արգելվում են իրենց աշխատանքների, կատարումների կամ հնչյունագրերի նկատմամբ այն գործողությունները, որոնք չեն թույլատրվում իրավատերերի կողմից կամ արգելված են օրենքով:

պաշտպանություն և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ այն արդյունավետ տեխնոլոգիական միջոցների շրջանցման դեմ պայքարելու համար, որոնք օգտագործվում են հեղինակների, կատարողների կամ հնչյունագրեր արտադրողների կողմից իրենց իրավունքներն իրականացնելու համար:

2. Յուրաքանչյուր Կողմ իր օրենքներում և կանոնակարգերում սահմանում է այնպիսի տեխնոլոգիայի, տեխնիկական սարքավորման կամ դրա բաղադրիչների դիտավորյալ արտադրության, ներմուծման կամ հասարակությանը հասանելի դարձնելու իրավական արգելքներ, որոնք հիմնականում օգտագործվում են աշխատանքների, կատարումների կամ հնչյունագրերի նկատմամբ կիրառվող տեխնոլոգիական միջոցները շրջանցելու կամ վնասելու համար:

3. Սույն հոդվածով սահմանված պարտավորություններից արված ցանկացած բացառություն կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ դրանք նախատեսված են ներպետական օրենքներով կամ կանոնակարգերով, և միայն այնքանով, որքանով դրանք չեն խախտում իրավական պաշտպանության համարժեքությունը կամ չեն նվազեցնում տեխնոլոգիական միջոցների շրջանցման նկատմամբ կիրառվող իրավական պաշտպանության միջոցների արդյունավետությունը:

## Հոդված 7.8

## Իրավունքների կառավարման վերաբերյալ տեղեկություններ

Յուրաքանչյուր Կողմ, ՄՀԻՊ 12-րդ հոդվածին և ՄԿՀՊ 19-րդ հոդվածին համապատասխան, ապահովում է համարժեք ու արդյունավետ իրավական պաշտպանության միջոցներ ցանկացած անձի դեմ, ով միտումնավոր կատարում է որևէ գործողություն՝ իմանալով, իսկ քաղաքացիաիրավական պաշտպանության միջոցների մասով՝ ունենալով ողջամիտ հիմքեր՝ իմանալու համար, որ այն կհանգեցնի Բեռնի կոնվենցիայով, ՄՀԻՊ-ով կամ ՄԿՀՊ-ով նախատեսված ցանկացած իրավունքի խախտման կամ հնարավոր կդարձնի, կդյուրացնի կամ կթաքցնի նման խախտումը:

## Հոդված 7.9

## Ապրանքային նշաններ

1. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է ապրանքների և ծառայությունների ապրանքային նշանների համարժեք ու արդյունավետ պաշտպանություն՝ իր համապատասխան օրենքների ու կանոնակարգերի և այն միջազգային համաձայնագրերի համաձայն, որոնց կողմ է ինքը հանդիսանում, ինչպես նաև ԹԻՓՍ համաձայնագրի, մասնավորապես դրա 15-21-րդ հոդվածների համաձայն:

2. Ապրանքային նշանների նկատմամբ բացառիկ իրավունքները կարող են օգտագործվել այն ապրանքների կամ ծառայությունների անհատականացման համար, որոնց մասով ապրանքային նշանը գրանցված է, ներառյալ ապրանքային նշան դնելով՝

(a) արտադրանքի՝ ներառյալ պիտակների, ապրանքների փաթեթների վրա, որոնք պատրաստվում են, առաջարկվում են վաճառքի համար, վաճառվում են կամ որևէ այլ ձևով դրվում են շրջանառության մեջ այն տարածքներում, որտեղ գրանցված է ապրանքային նշանը, կամ պահվում կամ փոխադրվում են այդ նպատակով, կամ ներմուծվում են այն տարածքներ, որտեղ գրանցված է ապրանքային նշանը.

(b) դրանք ցուցադրելիս Կողմերի այն տարածքներում անցկացվող ցուցահանդեսների և տոնավաճառների ժամանակ, որտեղ ապրանքային նշանը գրանցված է.

(c) ծառայություններ մատուցելիս.

(d) ապրանքները շրջանառության մեջ դնելու վերաբերյալ փաստաթղթերի վրա.

(e) վաճառքի համար ապրանքներ, ծառայությունների մատուցում առաջարկելիս, ինչպես նաև հայտարարություններում, ցուցանակների վրա և գովազդում, և

(f) համացանցում և հասցեագրման այլ միջոցներով:

3. Կողմերն ապրանքային նշանների առնչությամբ ապահովում են մյուս Կողմի շահագրգիռ անձանց համար իրավական միջոցներ՝ առանց իրավատիրոջ թույլտվության վերջինիս ապրանքային նշանին նույնական կամ շփոթելու աստիճան նման նշանների օգտագործումը կանխելու նպատակով, այն ապրանքների մասով, որոնց անհատականացման համար ապրանքային նշանը գրանցվում է, կամ նմանատիպ ապրանքների մասով, եթե այդպիսի օգտագործման արդյունքում շփոթմունքի հավանականություն է առաջանում:

### Հոդված 7.10

### Հանրահայտ ապրանքային նշաններ

1. Որևէ Կողմ չի կարող, որպես ապրանքային նշանի հանրահայտ լինելը որոշող պայման, պահանջել, որ ապրանքային նշանը գրանցված լինի այդ Կողմի տարածքում կամ որևէ այլ իրավազորության ներքո:

2. Կողմերն ապահովում են հանրահայտ ապրանքային նշանների պաշտպանությունն առնվազն ԹԻՓՍ համաձայնագրի 16.2-րդ հոդվածի և 16.3-րդ հոդվածի և Փարիզյան կոնվենցիայի 6bis հոդվածի համաձայն:

### Հոդված 7.11

### Ապրանքային նշանների գրանցում

1. Յուրաքանչյուր կողմ ապահովում է ապրանքային նշանների գրանցման համակարգ, որը ներառում է.

(a) ապրանքային նշանի գրանցումը մերժելու պատճառների վերաբերյալ դիմողի համար գրավոր հաղորդակցություն ապահովելու պահանջը: Նման հաղորդակցությունը կարող է ապահովվել էլեկտրոնային եղանակով.

(b) չեղյալ ճանաչելու վարույթի վերաբերյալ որոշումների՝ հիմնավորված լինելու և գրավոր ներկայացվելու պահանջը: Նման գրավոր որոշումները կարող են տրամադրվել էլեկտրոնային եղանակով, և

(c) շահագրգիռ անձանց համար ապրանքային նշանի չեղյալ կամ անվավեր ճանաչելը հայցելու հնարավորություն դրա գրանցումից հետո:

2. Յուրաքանչյուր Կողմ պետք է քայլեր ձեռնարկի՝ ապահովելու.

(a) ապրանքային նշանների էլեկտրոնային կիրառության և էլեկտրոնային մշակման, գրանցման ու պահպանման համակարգ, և

(b) հանրությանը հասանելի տվյալների էլեկտրոնային բազա, ներառյալ ապրանքային նշանների կիրառության և գրանցումների առցանց տվյալների բազա:

## Հոդված 7.12

## Աշխարհագրական նշումներ և ապրանքների ծագման տեղանուններ

Յուրաքանչյուր Կողմ իր տարածքում ապահովում է աշխարհագրական նշումների/ապրանքների ծագման տեղանունների համարժեք և արդյունավետ իրավական պաշտպանություն՝ իր համապատասխան ներպետական օրենքների, կանոնակարգերի ու կանոնների և ԹՐԻՓՍ համաձայնագրի, մասնավորապես դրա 22-րդ հոդվածի և 23-րդ հոդվածի համաձայն:[2]

Երկու Կողմերը կշարունակեն քննարկումները և կզարգացնեն հետագա համագործակցությունը վերոնշյալ հարցի առնչությամբ:

[2] Որպես պարզաբանում՝ ԵԱՏՄ և ԵԱՏՄ անդամ պետությունների ապրանքների ծագման տեղանունները Չինաստանում կարող են պաշտպանվել որպես աշխարհագրական նշումներ:

## Հոդված 7.13

### Արտոնագրունակություն

1. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ կետերի դրույթների համաձայն՝ արտոնագրում պետք է նախատեսվի ցանկացած գյուտի համար՝ անկախ դրա արտադրանք կամ եղանակ լինելուց, բոլոր տեխնոլոգիական ոլորտներում՝ պայմանով, որ այն նոր է, ունի գյուտարարական մակարդակ և կարող է ունենալ արդյունաբերական կիրառություն:

2. Յուրաքանչյուր կողմ կարող է արտոնագրունակությունից բացառել այն գյուտերը, որոնց առևտրային նպատակներով օգտագործումն իր տարածքում կանխարգելելն անհրաժեշտ է հասարակական կարգը կամ բարոյականությունը պահպանելու՝ ներառյալ մարդկանց, կենդանական կամ բուսական աշխարհի կյանքը կամ առողջությունը պահպանելու կամ շրջակա միջավայրին սպառնացող լուրջ վտանգից խուսափելու համար՝ պայմանով, որ նման բացառումը չի կատարվում սոսկ այն պատճառով, որ օգտագործումն արգելված է իր օրենսդրությամբ:

3. Յուրաքանչյուր Կողմ կարող է արտոնագրունակությունից բացառել նաև՝

(a) մարդկանց կամ կենդանիների բուժման համար նախատեսված՝ ախտորոշիչ, թերապևտիկ և վիրաբուժական մեթոդները, և

(b) միկրոօրգանիզմներից տարբերվող բույսերն ու կենդանիները և ոչ բիոլոգիական ու միկրոբիոլոգիական գործընթացներից տարբերվող՝ բույսերի կամ կենդանիների արտադրության համար նախատեսված առավելապես բիոլոգիական գործընթացները:

4. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ արտոնագրման որևէ դիմում չմերժվի միայն այն հիմքով, որ դիմումով ներկայացված առարկան ներառում է համակարգչային ծրագիր: Արտոնագրման դիմումներն այն գյուտերի դեպքում, որոնք վերաբերում են տեխնիկական լուծում համարվող համակարգչային

ծրագրերին, կարող են դասվել արտոնագրանակ օբյեկտների շարքին՝ Կողմի օրենքներին և կանոնակարգերին համապատասխան:

### Հոդված 7.14

### Պարտադիր լիցենզիաներ

Սույն գլխի որևէ դրույթ չի կարող ազդեցություն ունենալ յուրաքանչյուր Կողմի՝ ԹՐԻՓՍ համաձայնագրի 31-րդ հոդվածին և 31bis հոդվածին համապատասխան պարտադիր լիցենզիաներ տրամադրելու իրավունքի վրա:

### Հոդված 7.15

### Գյուտեր և օգտակար մոդելներ

1. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է գյուտերի համարժեք ու արդյունավետ իրավական պաշտպանություն՝ իր համապատասխան օրենքների և կանոնակարգերի, այն միջազգային համաձայնագրերի համաձայն, որոնց կողմ է հանդիսանում, և ԹՐԻՓՍ համաձայնագրի, մասնավորապես դրա 27-34-րդ հոդվածների համաձայն:

2. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է օգտակար մոդելների պատշաճ և արդյունավետ իրավական պաշտպանություն՝ իր համապատասխան օրենքների և կանոնակարգերի և այն միջազգային համաձայնագրերի համաձայն, որոնց կողմ է ինքը հանդիսանում:

### Հոդված 7.16

### Արդյունաբերական նմուշներ

Յուրաքանչյուր Կողմ ապահովում է արդյունաբերական նմուշների պատշաճ և արդյունավետ իրավական պաշտպանություն՝ իր համապատասխան օրենքների և կարգավորումների, այն միջազգային համաձայնագրերի համաձայն, որոնց կողմ

է հանդիսանում, և ԹՐԻՓՍ համաձայնագրի, մասնավորապես դրա 25-րդ հոդվածի և 26-րդ հոդվածի համաձայն:

### Հոդված 7.17

### Օգտագործողի գրաֆիկական միջերեսներ

Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ օգտագործողի գրաֆիկական միջերեսները հնարավոր լինի պաշտպանել որպես արդյունաբերական նմուշ՝ իր համապատասխան օրենքների և կարգավորումների համաձայն:

### Հոդված 7.18

### Արտոնագրի էլեկտրոնային հայտեր

Յուրաքանչյուր Կողմ ձգտում է ապահովել արտոնագրի հայտերը էլեկտրոնային եղանակով ներկայացնելու հնարավորություն:

### Հոդված 7.19

### Ինտեգրալ միկրոսխեմաների դիզայնի նախագծեր (տոպոլոգիաներ)

Յուրաքանչյուր Կողմ ապահովում է ինտեգրալ միկրոսխեմաների դիզայնի նախագծերի (տոպոլոգիաների) պատշաճ և արդյունավետ իրավական պաշտպանություն՝ իր համապատասխան օրենքների և կարգավորումների և այն միջազգային համաձայնագրերի համաձայն, որոնց կողմ է հանդիսանում, և ԹՐԻՓՍ համաձայնագրի, մասնավորապես, դրա 35-38-րդ հոդվածների համաձայն:

## Հոդված 7.20

### Գենետիկական ռեսուրսներ, ավանդական գիտելիքներ և բանահյուսություն

1. Կողմերը ճանաչում են գենետիկական ռեսուրսների, ավանդական գիտելիքների և բանահյուսության ներդրումը գիտական, մշակութային և տնտեսական զարգացման հարցում:

2. Հաշվի առնելով յուրաքանչյուր Կողմի միջազգային պարտավորությունները և այդ Կողմի օրենքներն ու կարգավորումները, Կողմերը կարող են համապատասխան միջոցներ սահմանել՝ գենետիկական ռեսուրսները, ավանդական գիտելիքները և բանահյուսությունը պաշտպանելու համար:

3. Կողմերը համաձայնում են շարունակել գենետիկական ռեսուրսներին, ավանդական գիտելիքներին և բանահյուսությանը վերաբերող համապատասխան հարցերի քննարկումը՝ հաշվի առնելով իրենց համապատասխան օրենքներում և կանոնակարգերում և միջազգային համաձայնագրերում հետագայում կատարվելիք փոփոխությունները:

## Հոդված 7.21

### Բույսերի նոր սորտեր

1. Կողմերն ապահովում են պատշաճ և արդյունավետ պաշտպանություն բույսերի նոր սորտերի սելեկցիոներների համար՝ առնվազն 1978 թվականի հոկտեմբերի 23-ին վերանայված՝ «Բույսերի նոր սորտերի պաշտպանության մասին» միջազգային կոնվենցիայով նախատեսված մակարդակին հավասար մակարդակով:

2. Սելեկցիոներների թույլտվությունը պահանջվում է պաշտպանված սորտի տնկանյութի հետ կապված առնվազն հետևյալ գործողություններն իրականացնելու համար.

(a) արտադրություն կամ վերարտադրություն (բազմացում)՝ առևտրային մարկետինգի նպատակներով.

(b) լավորակում՝ առևտրային նպատակներով բազմացման համար.

(c) վաճառքի համար առաջարկելը.

(d) վաճառք կամ շուկայահանման այլ գործողություններ, և

(e) ներմուծում կամ արտահանում:

## Հոդված 7.22

### Անբարեխիղճ մրցակցությունից պաշտպանություն

Յուրաքանչյուր Կողմ ապահովում է պաշտպանություն անբարեխիղճ մրցակցությունից՝ իր համապատասխան օրենքների ու կանոնակարգերի և Փարիզյան կոնվենցիայի 10bis հոդվածի համաձայն:

## Հոդված 7.23

### Մտավոր սեփականության օբյեկտների գրանցման համար պահանջվող փաստաթղթեր և տեղեկատվություն

Կողմերն ապահովում են մտավոր սեփականության օբյեկտների գրանցման համար պահանջվող փաստաթղթերի և տվյալների հասանելիությունը՝ իրենց համապատասխան օրենքների և կանոնակարգերի համաձայն:

## Հոդված 7.24

### Մտավոր սեփականության իրավունքների իրականացում

1. Կողմերն ապահովում են մտավոր սեփականության իրավունքների իրականացումն իրենց համապատասխան օրենքների և կանոնակարգերի ու այն

միջազգային համաձայնագրերի համաձայն, որոնց կողմ են հանդիսանում:

2. Կողմերն իրավատերերին հնարավորություն են ընձեռում կիրառելու քաղաքացիական, վարչական և դատական ընթացակարգեր մտավոր սեփականության իրավունքների իրականացման մասով:

3. Կողմերը ձգտում են ապահովել մտավոր սեփականության իրավունքների իրականացումը թվային միջավայրում:

4. Կողմերը միմյանց հետ համագործակցում են մտավոր սեփականության իրավունքների իրականացումը բարելավելու համար, մասնավորապես, հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների, ապրանքային նշանների, գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասով:

## Հոդված 7.25

### Մաքսային կարգավորման միջոցներ

1. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է մաքսային կարգավորման միջոցների արդյունավետ կիրառումը՝ իր համապատասխան օրենքների և կանոնակարգերի և այն միջազգային համաձայնագրերի համաձայն, որոնց կողմ է հանդիսանում՝ կեղծ ապրանքային նշան ունեցող ապրանքների[3] և հեղինակային իրավունքի խախտմամբ ստացված ապրանքների մասով[4]:

---

[3] Սույն հոդվածի նպատակներով՝ **«կեղծ ապրանքային նշան ունեցող ապրանքներ»** նշանակում է՝ ցանկացած ապրանք՝ ներառյալ փաթեթները, որի վրա, առանց թույլտվության, պատկերված է այդպիսի ապրանքի համար օրինականորեն գրանցված ապրանքային նշանի հետ նույնական ապրանքային նշան կամ այնպիսի ապրանքային նշան, որն իր հիմնական բնութագրերով հնարավոր չէ տարբերել այդպիսի ապրանքային նշանից, և այդպիսով, ներմուծման երկրի օրենսդրության համաձայն, խախտում է տվյալ ապրանքային նշանի իրավատիրոջ իրավունքները:

[4] Սույն հոդվածի նպատակներով՝ **«հեղինակային իրավունքի խախտմամբ ստացված ապրանքներ»** նշանակում է՝ ցանկացած ապրանք, որը արտադրության երկրում, առանց իրավատիրոջ կամ նրա կողմից պատշաճ կերպով լիազորված անձի համաձայնության, ստեղծված կրկնօրինակ է, և որը ուղղակիորեն կամ անուղղակիորեն կրկնօրինակվել է որևէ առարկայից այն դեպքում, երբ այդ կրկնօրինակի ստեղծումը, ներմուծման, երկրի օրենսդրության համաձայն, կհամարվեր հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքի խախտում:

2. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ իրավատիրոջը ներկայացվող պահանջները, որոնց կատարումն անհրաժեշտ է հնարավոր կեղծ ապրանքային նշան ունեցող ապրանքների կամ հեղինակային իրավունքի խախտմամբ ստացված ապրանքների բացթողումը կասեցնելու ընթացակարգեր սկսելու համար, անհիմն չխոչընդոտեն տվյալ ընթացակարգերի կիրառմանը:

3. Յուրաքանչյուր Կողմ, եթե այլ բան նախատեսված չէ սույն Համաձայնագրով, ընդունում է ընթացակարգեր, որոնք իրավատիրոջը, որն օրինական հիմքեր ունի կասկածելու, որ տեղի է ունենում կեղծ ապրանքային նշան ունեցող ապրանքների, հեղինակային իրավունքի խախտմամբ ստացված ապրանքների ներմուծում կամ արտահանում, հնարավորություն են տալիս դիմում ներկայացնելու մաքսային մարմիններին՝ պահանջելով մտավոր սեփականության իրավունքների իրականացման միջոցներ ձեռնարկել՝ պայմանով, որ տվյալ ներմուծմամբ կամ արտահանմամբ, այն երկրի օրենքներին և կանոնակարգերին համապատասխան, որտեղ գտնվում են ապրանքները, խախտվում են մտավոր սեփականության իրավունքները:

4. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ իր լիազորված մարմինների կողմից իրավատիրոջը տրամադրվող տեղեկատվությունն առնվազն ներառի անվանումներ և այլ լրացուցիչ տեղեկատվություն, որոնք թույլ կտան նույնականացնել տվյալ ապրանքների հայտարարատուին: Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ իր լիազորված մարմինների կողմից արգելապահված ապրանքների հայտարարատուին տրամադրվող տեղեկատվությունը առնվազն ներառի անվանումներ և այլ լրացուցիչ տեղեկատվություն, որոնք թույլ կտան նույնականացնել իրավատիրոջը:

5. Կողմերը կարող են սույն հոդվածի կիրառման շրջանակից բացառել այն ապրանքների ներմուծումը կամ արտահանումը, որոնք համարվում են ոչ առևտրային բնույթի:

6. Կողմերը միմյանց հետ համագործակցում են՝ զարգացնելու համար իրենց մաքսային մարմինների միջև կապերը՝ սահմանին մտավոր սեփականության իրավունքների իրականացումը բարելավելու նպատակով:

7. Յուրաքանչյուր Կողմ ստեղծում է կապի ապահովման կենտրոններ՝ կեղծված ապրանքների առևտրի վերաբերյալ տեղեկություններ փոխանակելու համար: Կողմերը, մասնավորապես, խթանում են տեղեկատվության փոխանակումը և համագործակցությունն իրենց մաքսային մարմինների միջև:

## Հոդված 7.26

## Մտավոր սեփականություն և նորարարություններ

1. Կողմերը ձգտում են խորացնել սույն գլխով նախատեսված կարգավորման առարկայի շուրջ իրենց համագործակցությունը՝ համապատասխան իրավասու մարմինների կամ շահագրգիռ այլ հաստատությունների միջև տեղեկատվության փոխանակման, հանդիպումների և մասնագիտական սեմինարների, գիտության, տեխնոլոգիաների և նորարարությունների ոլորտներում համատեղ նախագծերի միջոցով: Այս հարցի շուրջ փոխգործակցությունն իրականացվում է Համատեղ հանձնաժողովի միջոցով:

2. Սույն հոդվածում նշված համագործակցությունը ներառում, սակայն չի սահմանափակվում հետևյալով.

(a) համապատասխան մարմինների՝ նորարարությունների մասով մտավոր սեփականությանն առնչվող քաղաքականության վերաբերյալ տեղեկատվության փոխանակում.

(b) վերապատրաստման դասընթացներ ու համատեղ ծրագրեր.

(c) գիտական և տեխնոլոգիական գիտելիքների տարածում և

(d) այլ հարցեր, որոնց շուրջ Կողմերը եկել են համաձայնության:

## Հոդված 7.27

### Իրավասու մարմիններ, կապի ապահովման կենտրոններ և տեղեկատվության փոխանակում

1. Կողմերը սահմանում են այն մարմինները, որոնք հանդես են գալու որպես կապի ապահովման կենտրոններ՝ վերլուծություններ իրականացնելու և սույն գլխի գործողությունը վերահսկելու նպատակով:

2. Որևէ Կողմի պահանջով, ինչպես նաև ի լրումն համագործակցության արդեն իսկ գոյություն ունեցող ձևերի, Կողմերը՝

(a) քննարկում են իրենց համագործակցությունը դյուրացնելու ուղիները.

(b) միմյանց տեղեկացնում են սույն գլխով նախատեսված ընթացակարգերի իրականացման համար պատասխանատու իրավասու մարմինների և համապատասխան կապի ապահովման կենտրոնների մասին.

(c) միմյանց տեղեկացնում են կապի ապահովման կենտրոնների ցանկացած փոփոխության կամ իրենց իրավասու մարմինների կառուցվածքի կամ իրավասությունների ցանկացած էական փոփոխության մասին և

(d) անցկացնում են խորհրդակցություններ մտավոր սեփականության և հանրային առողջության ու սույն գլխի գործողությանն առնչվող այլ հարցերի շուրջ:

3. Կողմերը ձգտում են աշխատել ազգային դոմենի անվանումների առավել արդյունավետ կառավարման համակարգ ստեղծելու ուղղությամբ՝ նպատակ ունենալով կանխելու դոմենի այնպիսի անվանումների անարդար կիրառումը, որոնք նույնական են սպառողին մոլորության մեջ գցող ապրանքային նշանի հետ կամ շփոթեցնելու աստիճան նման են դրան:

4. Կողմերը կարող են համաձայնության գալ մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության որոշակի հարցերի շուրջ բանակցություններ սկսելու հարցում:

## ԳԼՈՒԽ 8

## ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆ

### Հոդված 8.1

### Նպատակները

1. Հաշվի առնելով առևտրային հարաբերություններում արդար մրցակցության կարևորությունը՝ Կողմերն ընդունում են, որ հակամրցակցային գործելակերպերի արգելումը, մրցակցային քաղաքականության իրականացումը և սույն գլխով կարգավորվող հարցերի շուրջ համագործակցությունը կնպաստեն տնտեսական արդյունավետության բարձրացմանը, շուկաների պատշաճ գործելուն և Կողմերի կայուն տնտեսական զարգացմանը:

2. Կողմերը, իրենց համապատասխան օրենքներին և կանոնակարգերին համապատասխան, ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ Կողմերի միջև առևտրի և ներդրումների վրա ազդող հակամրցակցային գործելակերպերը կանխելու և արգելելու նպատակով:

### Հոդված 8.2

### Մրցակցային իրավունքի կիրառման սկզբունքներ

1. Մրցակցային իրավունքի կիրառմանն ուղղված՝ յուրաքանչյուր Կողմի գործունեության նկատմամբ չպետք է դրսևորվի խտրական վերաբերմունք՝ ազգային պատկանելիության հիմքով:

2. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ անձը, որին ուղղված է մրցակցային իրավունքի կիրառմանն ուղղված գործունեությունը, հնարավորություն ունենա ներկայացնելու կարծիք կամ ապացույց ի պաշտպանություն իրեն:

3. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ անձը, ում նկատմամբ տվյալ

Կողմի մրցակցային օրենքների և կանոնակարգերի խախտման առնչությամբ որոշում է կայացվում, ունենա համապատասխան ընթացակարգերի միջոցով նման որոշումը վերանայելու հնարավորություն՝ տվյալ Կողմի օրենքների ու կանոնակարգերի համաձայն:

## Հոդված 8.3

## Թափանցիկություն

1. Յուրաքանչյուր Կողմ հրապարակային է դարձնում, ներառյալ՝ համապատասխան իրավասու մարմինների պաշտոնական կայքերում, իր մրցակցային օրենքներն ու կանոնակարգերը՝ ներառյալ մրցակցային իրավունքի կիրառմանն ուղղված գործունեության մասին ընթացակարգային կանոնները և համապատասխան իրավասու մարմինների վերջնական որոշումների մասին տեղեկատվությունը:

2. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ իր մրցակցային օրենքների ու կանոնակարգերի խախտումների փաստը հաստատող բոլոր վերջնական որոշումները լինեն գրավոր, պարունակեն փաստերի վերաբերյալ համապատասխան եզրահանգումներ և իրավական հիմք, որն ընկած է որոշումների հիմքում:

## Հոդված 8.4

## Հակամրցակցային գործելակերպեր

1. Կողմերը համաձայնում են, որ հետևյալ հակամրցակցային գործելակերպերն անհամատեղելի են սույն Համաձայնագրի պատշաճ գործողության հետ.

(a) այնպիսի կազմակերպությունների միջև հակամրցակցային

համաձայնություններ և համաձայնեցված գործելակերպեր, որոնց համար մրցակցությունը կանխելը, սահմանափակելը և/կամ բացառելը նպատակ է կամ գործունեության արդյունք.

(b) գերիշխող դիրքի չարաշահում կամ

(c) անբարեխիղճ մրցակցություն:

2. Յուրաքանչյուր Կողմ, իր համապատասխան օրենքների ու կանոնակարգերի համաձայն, ապահովում է կազմակերպությունների կենտրոնացվածության նկատմամբ արդյունավետ վերահսկողության իրականացումն այն չափով, որն անհրաժեշտ է տվյալ Կողմի տարածքում մրցակցության պաշտպանության և զարգացման համար:

## Հոդված 8.5

## Համագործակցություն

1. Կողմերն ընդունում են մրցակցության ոլորտում համագործակցության կարևորությունը, ներառյալ՝ մրցակցային իրավունքի արդյունավետ կիրառումը խթանելու միջոցով: Կողմերը համաձայնում են համագործակցել իրենց համապատասխան օրենքներին, կանոնակարգերին և կարևոր շահերին համատեղելի ձևաչափով և իրենց՝ ողջամտորեն հասանելի ռեսուրսների սահմաններում:

2. Համագործակցությունը ներառում է մրցակցային իրավունքի կիրառմանն ուղղված գործունեության մասով տեղեկատվության փոխանակումը, խորհրդատվությունները, համագործակցությունը, ինչպես նախատեսված է սույն հոդվածի 3-րդ կետով, և տեխնիկական համագործակցությանն ուղղված միջոցառումները, ներառյալ վերապատրաստման ծրագրերը, աշխատաժողովները և ուսումնասիրությունների մասով համագործակցությունն ու այլ միջոցառումները, նպատակ ունենալով խթանելու մրցակցային քաղաքականության և մրցակցային իրավունքի կիրառման մասով յուրաքանչյուր

Կողմի կարողությունները:

3. Եթե որևէ Կողմ գտնում է, որ մյուս Կողմի տարածքում հակամրցակցային գործելակերպերն ազդեցություն են ունենում իր շահերի վրա, նա կարող է մյուս Կողմին մրցակցային իրավունքի կիրառման մասով համապատասխան համագործակցության պահանջ ներկայացնել: Պահանջը ստացած Կողմը մանրակրկիտ ուսումնասիրում է պահանջը և, իր օրենքներին ու կանոնակարգերին համապատասխան, որոշում կայացնում մրցակցային իրավունքի կիրառմանն ուղղված գործունեություն նախաձեռնելու վերաբերյալ և պահանջ ներկայացրած Կողմին տեղեկացնում այդ ուսումնասիրության ու մրցակցային իրավունքի կիրառմանն ուղղված գործունեության արդյունքների մասին՝ այն նախաձեռնած լինելու դեպքում:

4. Եթե որևէ Կողմ սույն գլխի նպատակներով տեղեկատվություն է տրամադրում մյուս Կողմին, վերջինիս կողմից այդ տեղեկատվությունն օգտագործվում է միայն այդ նպատակներով և դրանք չի բացահայտում կամ փոխանցում որևէ այլ անձի և/կամ Համաձայնագրի կողմ չհանդիսացող կողմերի՝ առանց այդ տեղեկատվություն տրամադրած Կողմի համաձայնության: Չհակասելով սույն գլխի որևէ այլ դրույթի՝ Կողմերից ոչ մեկը պարտավոր չէ մյուս Կողմին տեղեկատվություն տրամադրել, եթե դա արգելվում է իր համապատասխան օրենքներով և կանոնակարգերով:

**Հոդված 8.6**

**Խորհրդակցություններ**

1. Կողմերի միջև փոխըմբռնումը խթանելու և/կամ սույն գլխից բխող կոնկրետ հարցեր լուծելու նպատակով ցանկացած Կողմ կարող է խորհրդակցություններ անցկացնելու մասին պահանջ ներկայացնել: Խորհրդակցություններ անցկացնելու մասին պահանջը ներկայացվում է մյուս Կողմի՝ սույն Համաձայնագրի 12.2-րդ հոդվածին համապատասխան ստեղծված

կապի ապահովման կենտրոն: Նման խորհրդակցությունները չեն սահմանափակում որևէ Կողմի՝ իր համապատասխան օրենքներն ու կանոնակարգերը կիրառելու իրավունքները:

2. Սույն հոդվածին համապատասխան անցկացվող խորհրդակցությունների ընթացքում պահանջ ստացած Կողմը ողջամիտ ժամկետում ամբողջությամբ և համակողմանիորեն ապահովում է խորհրդակցությունների առարկա հարցի քննարկումը: Կողմերը ձգտում են խորհրդակցություններն անցկացնել կառուցողական միջավայրում:

**Հոդված 8.7**

**Մրցակցային իրավունքի կիրառման հարցում անկախություն**

Սույն գլուխը չպետք է խոչընդոտի որևէ Կողմին՝ լինել անկախ իր համապատասխան մրցակցային օրենքներն ու կանոնակարգերը կիրառելու հարցում:

## ԳԼՈՒԽ 9

## ՊԵՏԱԿԱՆ ԳՆՈՒՄՆԵՐ

### Հոդված 9.1

### Նպատակները

Կողմերն ընդունում են պետական գնումների կարևորությունն իրենց համապատասխան տնտեսություններում և առավել թափանցիկություն ապահովելու նպատակներով համաձայնում են ամրապնդել համագործակցությունն իրենց համապատասխան օրենքների և կանոնակարգերի, էլեկտրոնային գնումների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման և էլեկտրոնային գնումների վերաբերյալ փորձի փոխանակման ոլորտներում:

### Հոդված 9.2

### Թափանցիկություն

Կողմերը, պետական գնումների մասին իրենց համապատասխան օրենքների և կանոնակարգերի համաձայն, համացանցում [5] հրապարակում են իրենց համապատասխան օրենքները և կանոնակարգերը, ընդհանուր կիրառության վարչական ակտերը և պետական գնումների մրցույթների մասին այնպիսի

[5] Հայաստանի Հանրապետության համար՝ պաշտոնական կայքում՝ www.procurement.am
Բելառուսի Հանրապետության համար՝ պաշտոնական կայքերում՝ www.icetrade.by, www.pravo.by, www.zakupki.butb.by, www.goszakupki.by, www.butb.by
Ղազախստանի Հանրապետության համար՝ պաշտոնական կայքերում՝ www.goszakup.gov.kz, www.adilet.zan.kz
Ղրղզստանի Հանրապետության համար՝ պաշտոնական կայքում՝ www.zakupki.gov.kg
Ռուսաստանի Դաշնության համար՝ պաշտոնական կայքերում՝ www.zakupki.gov.ru, www.pravo.gov.ru, www.sberbank-ast.ru, www.etp.roseltorg.ru, www.etp.zakazrf.ru, www.rts-tender.ru, www.etp-micex.ru
Չինաստանի Ժողովրդական Հանրապետության համար՝ պաշտոնական կայքում՝ www.cegp.gov.cn
Վերոնշյալ կայքերի որևէ փոփոխության դեպքում համապատասխան Կողմը մյուս կողմին ծանուցում է այդպիսի փոփոխության մասին իր կապի ապահովման կենտրոնների միջոցով:

տեղեկություններ, ինչպիսիք են գնման հայտի վերաբերյալ հայտարարությունները, գնումների վերաբերյալ փաստաթղթերը և մրցույթների արդյունքները՝ բացառությամբ գաղտնի տեղեկությունների, ինչպես սահմանված է սույն Համաձայնագրի 1.11-րդ հոդվածով: Կողմերը հնարավորության սահմաններում ապահովում են տեղեկությունների այս աղբյուրների՝ հանրության համար հասանելիությունը: Կողմերը հնարավորության սահմաններում համացանցում [6] հրապարակում են իրենց համապատասխան օրենքներն ու կանոնակարգերը և ընդհանուր կիրառության վարչական ակտերը՝ դրանք ուժի մեջ մտնելուց առաջ կամ ուժի մեջ մտնելու օրը:

## Հոդված 9.3

## Կապի ապահովման կենտրոններ

Սույն գլխի նպատակներով յուրաքանչյուր Կողմ նշանակում է կապի ապահովման կենտրոն: Կապի ապահովման կենտրոնները համատեղ աշխատանքներ են կատարում սույն գլխի գործողությունը դյուրացնելու նպատակով:

[6] Հայաստանի Հանրապետության համար՝ պաշտոնական կայքում՝ www.procurement.am
Բելառուսի Հանրապետության համար՝ պաշտոնական կայքերում՝ www.icetrade.by, www.pravo.by, www.zakupki.butb.by, www.goszakupki.by, www.butb.by
Ղազախստանի Հանրապետության համար՝ պաշտոնական կայքերում՝ www.goszakupki.gov.kz, www.adilet.zan.kz
Ղրղզստանի Հանրապետության համար՝ պաշտոնական կայքում՝ www.zakupki.gov.kg
Ռուսաստանի Դաշնության համար՝ պաշտոնական կայքերում՝ www.zakupki.gov.ru, www.pravo.gov.ru, www.sberbank-ast.ru, www.etp.roseltorg.ru, www.etp.zakazrf.ru, www.rts-tender.ru, www.etp-micex.ru
Չինաստանի Ժողովրդական Հանրապետության համար՝ պաշտոնական կայքում՝ www.ccgp.gov.cn
Վերոնշյալ կայքերի որևէ փոփոխության դեպքում համապատասխան Կողմը մյուս Կողմին ծանուցում է այդպիսի փոփոխության մասին իր կապի ապահովման կենտրոնների միջոցով:

ԳԼՈՒԽ 10

# ՈԼՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

## Հոդված 10.1

## Նպատակները և սկզբունքները

1. Սույն գլխի նպատակներն են.

(a) փոխշահավետ եղանակով զարգացնել Կողմերի միջև ոլորտային համագործակցությունը և փոխգործակցությունը.

(b) աջակցել նորարարությանը.

(c) բարձրացնել Կողմերի տնտեսությունների ներդրումային գրավչությունն ու մրցունակությունը և

(d) խթանել կայուն զարգացումն ու համագործակցությունը առևտրի և ներդրումների ոլորտներում:

2. Համագործակցությունը հիմնված կլինի հետևյալ սկզբունքների վրա՝ Կողմերի ազգային շահերի հավասարություն և դրանց առնչությամբ հաշվետվողականություն, փոխադարձ շահ, բարեխիղճ մրցակցություն, խտրականության բացառում և թափանցիկություն:

3. Կողմերը կզարգացնեն ոլորտային համագործակցությունը՝ հաշվի առնելով տնտեսության տարբեր հատվածներին առնչվող իրենց ռազմավարությունը և զարգացման ծրագրերը՝ չսահմանափակելով այս ոլորտում ԵԱՏՄ անդամ պետությունների և Չինաստանի՝ գոյություն ունեցող կամ ծրագրվող երկկողմ համագործակցության նախաձեռնությունները:

## Հոդված 10.2

## Ոլորտային համագործակցության ոլորտներ և բնագավառներ

1. Կողմերը համաձայնում են զարգացնել համագործակցությունը գյուղատնտեսության, էներգետիկայի, տրանսպորտի, արդյունաբերական համագործակցության, տեղեկատվական և հաղորդակցման ենթակառուցվածքի, տեխնոլոգիաների և նորարարության, ֆինանսների և շրջակա միջավայրի ոլորտներում։

2. Կողմերի միջև համագործակցության համապատասխան բնագավառները ներառում են.

(a) ներդրումների ներգրավում Կողմերի արդյունաբերական, տրանսպորտային և նյութատեխնիկական, գյուղատնտեսական և այլ օբյեկտների զարգացման ու արդիականացման համար՝ բարձր տեխնոլոգիաների կիրառմամբ ստեղծված, նորարարական և արտահանման համար նախատեսված արտադրանքի համատեղ արտադրություն զարգացնելու նպատակով.

(b) հետազոտությունների ու մշակումների աշխատանքների ոլորտում և Կողմերի արդյունաբերական ու նորարարական ենթակառուցվածքին առնչվող նորարարության ոլորտում Կողմերի միջև փոխգործակցության արդյունավետ մեխանիզմների ստեղծման և զարգացման խթանում.

(c) առաջատար տեխնոլոգիաների և նորարարությունների փոխանցում.

(d) տեղեկատվական և հաղորդակցման ենթակառուցվածքի զարգացում ու օգտագործում.

(e) տրանսպորտային միջանցքների զարգացում՝ ներառյալ տրանսպորտային ենթակառուցվածքի ստեղծումն ու արդիականացումը և տրանսպորտային ուղիների բարելավումը.

(f) շրջակա միջավայրի պաշտպանության և «կանաչ աճի» ոլորտում համագործակցության խթանում, և

(g) ԵԱՏՄ անդամ պետությունների ու Չինաստանի ֆինանսական կարգավորման մարմինների միջև համագործակցությանն աջակցություն:

## Հոդված 10.3

## Համագործակցության ձևեր

Կողմերը համաձայնում են խորացնել համագործակցությունը հետևյալի միջոցով.

(a) տեղեկատվության փոխանակում և խորհրդատվությունների անցկացում, ինչպես նաև տեղեկատվական օժանդակում Կողմերի ձեռնարկություններին.

(b) համատեղ ֆորումներ՝ ոլորտային համագործակցության, համատեղ ցուցահանդեսների, տոնավաճառների, միջազգային սեմինարների ու գիտական համաժողովների հետ կապված հարցերը քննարկելու համար.

(c) փորձի փոխանակում տնտեսության բարեփոխումների ու կառուցվածքային կանոնակարգումների իրականացում նորարարության խթանման և Կողմերի արդյունաբերության զարգացման հետ կապված հարցերի մասով.

(d) համատեղ առաջարկությունների մշակում՝ համաշխարհային ֆինանսական ճգնաժամի հետևանքներին հակազդելու համար.

(e) փոխգործակցություն՝ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի կարգավորման համար միջազգային ու ազգային ֆինանսական հաստատությունների ռեսուրսներ ներգրավելու մասով՝ ներառյալ ոլորտային համագործակցության բնագավառում ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող ծրագրերը.

(f) երկխոսության ու հաղորդակցության խթանում Կողմերի ձեռնարկությունների միջև և

(g) սույն գլխով կարգավորվող հարցերի մասով փորձագետների վերապատրաստմանն առնչվող փորձի փոխանակում:

## Հոդված 10.4

## Ենթակոմիտեներ և *ad hoc* աշխատանքային խմբեր

1. Կողմերը կարող են դիտարկել Համատեղ հանձնաժողովի շրջանակներում ենթակոմիտեներ կամ *ad hoc* աշխատանքային խմբեր ստեղծելու հարցը՝ սույն գլխի շրջանակներում Կողմերի համագործակցությունը խթանելու համար:

2. Այդպիսի ենթակոմիտեների կամ *ad hoc* աշխատանքային խմբերի ստեղծումն ու մակարդակը պետք է համաձայնեցվի Կողմերի համապատասխան մարմինների կողմից՝ ինքնուրույն:

3. Ենթակոմիտեները և ad hoc աշխատանքային խմբերը կարող են մշակել ու ընդունել համագործակցության ծրագրեր և նախաձեռնություններ համապատասխան ոլորտներում կամ դրանք ներկայացնել Համատեղ հանձնաժողովի քննարկմանը:

## ԳԼՈՒԽ 11

## ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

### Հոդված 11.1

### Կիրառման շրջանակը և ընդհանուր դրույթներ

1. Կողմերն ընդունում են էլեկտրոնային առևտրի (այսուհետ՝ «էլ. առևտուր») դինամիկ ու նորարարական բնույթը, ինչը դրական ազդեցություն ունի Կողմերի միջև փոխադարձ առևտրի աճի վրա և շահավետ է առևտրի բոլոր մասնակիցների համար:

2. Սույն գլխի նպատակն է խթանել էլ. առևտրի զարգացումը՝ հաշվի առնելով համագործակցության և էլ. առևտրի ոլորտում անհարկի խոչընդոտները շրջանցելու կարևորությունը:

### Հոդված 11.2

### Սահմանումներ

Սույն գլխի նպատակներով՝

(a) **«անձնական տվյալներ»** նշանակում է՝ նույնականացված կամ նույնականացման ենթակա (ուղղակիորեն կամ անուղղակիորեն) ֆիզիկական անձին վերաբերող տեղեկություններ.

(b) **«էլեկտրոնային փաստաթուղթ»** նշանակում է՝ փաստաթուղթ, որում տեղեկությունները ներկայացված են էլեկտրոնային եղանակով, և որը կարելի է ստորագրել էլեկտրոնային ստորագրությամբ:

## Հոդված 11.3

### Էլեկտրոնային հաստատում

Կողմերն աշխատում են էլեկտրոնային հաստատման մեթոդների փոխադարձ ճանաչման ուղղությամբ: Էլեկտրոնային հաստատման մեթոդների փոխադարձ ճանաչման գործընթացն արագացնելու նպատակով Կողմերը համագործակցում են և իրականացնում լավագույն փորձի փոխանակում, ինչի արդյունքում ապահովվում է տվյալների լիարժեք պաշտպանությունն ու հավաստիությունը:

## Հոդված 11.4

### Էլեկտրոնային փաստաթղթերի օգտագործում

1. Կողմերը ձգտում են ապահովել, որ արտաքին առևտրի գործարքներին վերաբերող փաստաթղթերը հնարավոր լինի ներկայացնել Կողմերի իրավասու մարմիններին էլեկտրոնային տարբերակով ստորագրվող էլեկտրոնային փաստաթղթերի ձևով:

2. Կողմերից ոչ մեկը չի կարող ընդունել կամ պահպանել այնպիսի միջոցներ, որոնք պարունակում են պահանջներ արտաքին առևտրի գործարքներին վերաբերող՝ էլեկտրոնային տարբերակով ստորագրվող էլեկտրոնային փաստաթղթի ձևով ներկայացված փաստաթղթերի իսկությունը թղթային տարբերակով փաստաթղթեր ներկայացնելու միջոցով հաստատելու վերաբերյալ:

## Հոդված 11.5

## Սպառողների իրավունքների պաշտպանություն էլ. առևտրի ոլորտում

1. Կողմերը էլ. առևտրի ոլորտում սպառողների իրավունքների պաշտպանությունը ձգտում են ապահովել այնպիսի մակարդակով, որը չի զիջում առևտրի մյուս ձևերի դեպքում տրամադրվող պաշտպանությանը:

2. Կողմերը, իրենց համապատասխան քաղաքականության, օրենքների ու կանոնակարգերի շրջանակում, ընդունում կամ պահպանում են այնպիսի միջոցներ, որոնք թույլ են տալիս կանխել սպառողներին վնասող կամ սպառողներին վնաս հասցնելու վտանգ ստեղծող՝ կեղծ առևտրային գործողությունները:

3. Կողմերը էլ. առևտրի շրջանակներում ճանաչում են անվտանգության, բարեխիղճ ձեռնարկատիրական գործելակերպերի և ապրանքների վերաբերյալ համաստի տեղեկություններ ստանալու առնչությամբ սպառողների իրավունքները:

4. Կողմերը կարող են ստեղծել հանրային տեղեկատվության պաշտոնական ռեսուրսներ և դրանցում տեղադրել նյութեր էլ. առևտրի կարևոր ասպեկտների ու ռիսկերի վերաբերյալ և ապահով ու կայուն սպառման օրինակների խթանմանն ուղղված այլ տեղեկություններ: Կողմերը չպետք է ստեղծեն հետ կանչված ապրանքների, ոչ անվտանգ ապրանքների ու ծառայությունների, անբարեխիղճ արտադրողների, վաճառողների, միջնորդների և անորակ ու ոչ անվտանգ ապրանքներ մատակարարողների կամ ծառայություններ մատուցողների ցուցակներ պարունակող՝ ազգային կամ միջպետական տեղեկատվական որևէ համակարգ՝ հիմնված չհաստատված տվյալների վրա:

5. Սույն հոդվածով կարգավորվող միջոցների կիրառումը բարելավելու, մշտադիտարկում անցկացնելու և էլ. առևտրի ոլորտում սպառողների իրավունքների պաշտպանության հետ կապված հարցերի վերաբերյալ

տեղեկություններ փոխանակելու նպատակով Կողմերը ստեղծում են սպառողների իրավունքների պաշտպանության բնագավառում իրավասու մարմինների ներկայացուցիչներից բաղկացած՝ կապի ապահովման խումբ:

### Հոդված 11.6

### Անձնական տվյալների պաշտպանություն

1. Ընդունելով էլ. առևտրի ոլորտում անձնական տվյալների պաշտպանության կարևորությունը՝ Կողմերը ձեռնարկում են միջոցներ՝ ուղղված անձնական տվյալների լիարժեք պաշտպանության ապահովմանը՝ իրենց օրենքներին ու կանոնակարգերին համապատասխան:

2. Կողմերը ձգտում են ապահովել անձնական տվյալների միջսահմանային փոխանցման համար անհատի՝ ուղղակիորեն արտահայտված համաձայնության ձեռքբերումը:

3. Այն Կողմը, որը չի ապահովում անձնական տվյալների որոշակի կատեգորիաների պաշտպանությունը, չի կարող մյուս Կողմից պահանջել անձնական տվյալների այդ կատեգորիաների պաշտպանության ապահովում, ինչպես նաև դրանց նկատմամբ պաշտպանության միջոցների կիրառում:

### Հոդված 11.7

### Համագործակցություն

1. Ընդունելով էլ. առևտրի համընդհանուր բնույթը՝ Կողմերը ձգտում են.

(a) փոխանակել օրենքների և կանոնակարգերի, դրանց կիրարկման վերաբերյալ տեղեկություններ և փորձ, ինչպես նաև Կողմերի իրավասու մարմինների միջև զարգացնել համագործակցությունը հետևյալ ուղղություններով.

(i) անձնական տվյալների պաշտպանություն.

(ii) սպառողների իրավունքների պաշտպանություն.

(iii) անցանկալի առևտրային էլեկտրոնային հաղորդագրություններ. և

(iv) էլեկտրոնային հաստատում.

(b) խրախուսել էլ. առևտրի գործընթացը դյուրացնող տեխնոլոգիաների զարգացումն ու օգտագործումը.

(c) խրախուսել մասնավոր հատվածում էլ. առևտրին առնչվող ինքնակարգավորվող միջոցների ընդունումը.

(d) փոխգործակցել՝ էլ. առևտրի վերաբերյալ վիճակագրական տեղեկություններ հավաքագրելուն ուղղված մոտեցումները և գիտական հետազոտություններում դրանց կիրառումը զարգացնելու նպատակով, և

(e) կազմակերպել սեմինարներ ու փորձագիտական երկխոսություններ հանրային իշխանությունների և Կողմերի՝ մասնավոր հատվածի ներկայացուցիչների միջև:

2. Կողմերը դիտարկում են էլ. առևտրի հարցերով ենթակոմիտե ստեղծելու հնարավորությունը և միմյանց տեղեկացնում են սույն Համաձայնագրի 12.2-րդ հոդվածի համաձայն ստեղծված՝ կապի ապահովման կենտրոնների մասին:

## Հոդված 11.8

## Թափանցիկություն

Յուրաքանչյուր կողմ իր պաշտոնական կայքերում հրապարակում է սույն գլխի գործողությանը վերաբերող կամ դրա գործողության վրա ազդող քաղաքականության մասին տեղեկատվություն, բոլոր համապատասխան օրենքները և կանոնակարգերը՝ մինչև դրանց ուժի մեջ մտնելը:

## ԳԼՈՒԽ 12

## ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

### Հոդված 12.1

### Համատեղ հանձնաժողով

1. Կողմերը սույնով ստեղծում են Համատեղ հանձնաժողով, որտեղ համանախագահում է երկու ներկայացուցիչ. մեկը՝ ԵԱՏՄ-ից և ԵԱՏՄ անդամ պետություններից՝ ի դեմս Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի անդամի, և մյուսը՝ Չինաստանի կառավարությունից՝ նախարարի մակարդակով, կամ՝ ի դեմս նրա կողմից նշանակված ներկայացուցիչների: Կողմերը պետք է ներկայացված լինեն այդ նպատակով պաշտոնապես նշանակված բարձրաստիճան պաշտոնյաների կողմից:

2. Համատեղ հանձնաժողովն իրականացնում է հետևյալ գործառույթները.

(a) սույն Համաձայնագրով կարգավորվող ցանկացած հարցի քննարկում.

(b) սույն Համաձայնագրին առնչվող ցանկացած այլ հարցի քննարկում՝ Կողմերի միջև փոխադարձ համաձայնությամբ.

(c) սույն Համաձայնագրով նախատեսված դեպքերում վերահսկողություն է իրականացնում ենթակոմիտեների նկատմամբ, եթե Կողմերը համաձայնում են իրենց փոխադարձ համաձայնությամբ ստեղծել այդպիսի ենթակոմիտեներ.

(d) ենթակոմիտեների կողմից ներկայացված՝ սույն Համաձայնագրում փոփոխություն կատարելու ցանկացած առաջարկության քննարկում՝ Կողմերին առաջարկություններ ներկայացնելու նպատակով.

(e) սույն Համաձայնագրի նպատակներից ելնելով՝ Կողմերի միջև առևտրի հետագա զարգացման և ընդլայնման հնարավորությունների

ուսումնասիրում, և

(f) Կողմերի կողմից իր քննարկման համար ներկայացված խնդիրների վերաբերյալ խորհրդակցությունների և դրանց բարեկամական լուծման հնարավորություն ընձեռող ընթացակարգի ստեղծում:

3. Համատեղ հանձնաժողովը կարող է՝

(a) ստեղծել ենթակոմիտեներ կամ, անհրաժեշտության դեպքում, *ad hoc* աշխատանքային խմբեր և խորհրդատվության համար հարցերն ուղղել ցանկացած ենթակոմիտե կամ *ad hoc* աշխատանքային խումբ.

(b) խորհրդատվություն ստանալու նպատակով դիմել ցանկացած փորձագետի, եթե դա կօգնի Համատեղ հանձնաժողովին իր պարտականությունները կատարելու հարցում.

(c) ձգտել լուծել Կողմերի կողմից իր քննարկմանը ներկայացված՝ սույն Համաձայնագրի գործողության հետ կապված ցանկացած խնդիր, և

(d) իր գործառույթներն իրականացնելիս ձեռնարկել նմանատիպ այլ գործողություններ՝ Կողմերի համաձայնությամբ:

4. Համատեղ հանձնաժողովի ընթացակարգային նորմերը սահմանված են սույն Համաձայնագրի 1-ին հավելվածով:

5. Համատեղ հանձնաժողովն ընդունում է իր գործառույթների շրջանակներում գտնվող ցանկացած հարցի վերաբերյալ առաջարկություններ: Նա կարող է նաև ընդունել որոշումներ սույն հոդվածի 4-րդ կետի մեջ նշված՝ Համատեղ հանձնաժողովի ընթացակարգային նորմերով կարգավորվող հարցերի վերաբերյալ: Համատեղ հանձնաժողովի որոշումները, առաջարկությունները ընդունվում և ցանկացած այլ գործողություններ կատարվում են ընդհանուր համաձայնությամբ: Կողմերը պետք է ձգտեն ձեռնարկել բոլոր անհրաժեշտ գործողությունները՝ Համատեղ հանձնաժողովի կողմից ներկայացված առաջարկությունները ժամանակին կատարելու համար:

## Հոդված 12.2

### Կապի ապահովման կենտրոններ

Սույն հոդվածի, ինչպես նաև սույն Համաձայնագրի այլ համապատասխան հոդվածների համաձայն՝ յուրաքանչյուր Կողմ նշանակում է կապի ապահովման կենտրոններ, որոնք պատասխանատու կլինեն սույն Համաձայնագրով կարգավորվող ցանկացած հարցի շուրջ մյուս Կողմի և Համատեղ հանձնաժողովի հետ հաղորդակցության համար: Յուրաքանչյուր Կողմ, ներքին ընթացակարգերին համապատասխան, նշանակում է կապի ապահովման իր կենտրոնները և սույն Համաձայնագիրն ուժի մտնելու օրվանից հետո՝ 90 օրվա ընթացքում, այդ նշանակման մասին ծանուցում է մյուս Կողմին:

# ԳԼՈՒԽ 13

# ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

## Հոդված 13.1

## Հավելվածներ

Սույն Համաձայնագրի հավելվածները կազմում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

## Հոդված 13.2

## Միանալը

1. ԵԱՏՄ նոր անդամ պետությունը միանում է սույն Համաձայնագրին՝ Կողմերի միջև ձեռք բերված փոխադարձ համաձայնությամբ, սույն Համաձայնագրի Կողմերի և ԵԱՏՄ այդ նոր անդամ պետության միջև սույն Համաձայնագրին իր միանալու շուրջ բանակցությունների միջոցով: Այդ միանալն իրականացվում է սույն Համաձայնագրին լրացուցիչ արձանագրության ստորագրման միջոցով:

2. Եվրասիական տնտեսական հանձնաժողովը, սույն Համաձայնագրի 12.2-րդ հոդվածին համապատասխան, կապի ապահովման կենտրոնների միջոցով Չինաստանին անհապաղ գրավոր ծանուցում է ԵԱՏՄ-ին միանալու թեկնածուի կարգավիճակ ձեռք բերած ցանկացած երկրի վերաբերյալ ցանկացած տեղեկության կամ ԵԱՏՄ-ին միանալու ցանկացած գործընթաց ավարտին հասցնելու մասին:

## Հոդված 13.3

### Ուժի մեջ մտնելը

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ԵԱՏՄ-ի, ԵԱՏՄ անդամ պետությունների և Չինաստանի կողմից՝ սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ իրենց համապատասխան ներքին իրավական ընթացակարգերի կատարումն ավարտելը հաստատող վերջին գրավոր ծանուցումը ստանալու օրվանից հետո 60-րդ օրը։ Նման ծանուցումներն իրականացվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի և Չինաստանի միջև։

## Հոդված 13.4

### Փոփոխություններ

1. Սույն Համաձայնագիրը կարող է փոփոխվել Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ՝ լրացուցիչ արձանագրություն կնքելու միջոցով։ Բոլոր փոփոխությունները կազմում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը։ Ցանկացած փոփոխություն ուժի մեջ է մտնում սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար պահանջվող ընթացակարգին համապատասխան։

2. Եթե ԱՀԿ համաձայնագրի դրույթի մեջ, որն ինկորպորացվել է սույն Համաձայնագրում, կատարվում է որևէ փոփոխություն, Կողմերը խորհրդակցում են սույն Համաձայնագիրը համապատասխանաբար փոփոխելու անհրաժեշտության շուրջ։

## Հոդված 13.5

### Դուրս գալը և գործողության դադարեցումը

1. ԵԱՏՄ-ն կարող է դադարեցնել սույն Համաձայնագրի գործողությունը՝ Չինաստանին գրավոր ծանուցելու միջոցով, կամ Չինաստանը կարող է

դադարեցնել սույն Համաձայնագրի գործողությունը՝ ԵԱՏՄ-ին գրավոր ծանուցելու միջոցով: Սույն Համաձայնագրի գործողությունը դադարում է այդպիսի ծանուցման ամսաթվից հետո 180-րդ օրը:

2. ԵԱՏՄ ցանկացած անդամ պետություն, որը դուրս է գալիս ԵԱՏՄ-ից, *ipso facto* (փաստի ուժով) դադարում է սույն Համաձայնագրի կողմ լինելուց այն նույն օրը, երբ դուրս է գալիս ԵԱՏՄ-ից:

3. ԵԱՏՄ-ն և սույն հոդվածի 2-րդ կետում նշված ԵԱՏՄ անդամ պետությունն անմիջապես դիվանագիտական ուղիներով ծանուցումներ են ուղարկում Չինաստանին՝ արձանագրելով ԵԱՏՄ-ից դուրս գալու կոնկրետ օրը, որը սահմանվել է ԵԱՏՄ-ի մասին պայմանագրում նախատեսված՝ ԵԱՏՄ-ից դուրս գալու համար 12-ամսյա ժամկետին համապատասխան: ԵԱՏՄ-ից և ԵԱՏՄ այդ անդամ պետությունից ծանուցումներն ստանալուց հետո Չինաստանը դիվանագիտական ուղիներով հաստատում է ԵԱՏՄ-ից և սույն Համաձայնագրից դուրս գալու օրն արձանագրող՝ վերը նշված ծանուցումների ստացումը:

4. Եթե ԵԱՏՄ-ի մասին պայմանագրում որևէ փոփոխություն է կատարվում ԵԱՏՄ-ից դուրս գալու վերաբերյալ, Կողմերը խորհրդակցում են սույն Համաձայնագիրը համապատասխանաբար փոփոխելու անհրաժեշտության շուրջ:

5. Եթե ԵԱՏՄ անդամ պետությունը դուրս է գալիս սույն Համաձայնագրից սույն հոդվածի 2-րդ կետին և 3-րդ կետին համապատասխան, սույն Համաձայնագիրը շարունակում է ուժի մեջ մնալ ԵԱՏՄ-ի և ԵԱՏՄ մնացած անդամ պետությունների համար:

Ի ՀԱՎԱՍՏՈՒՄՆ ՈՐԻ՝ ներքոստորագրյալները, պատշաճ կերպով լիազորված լինելով, ստորագրեցին սույն Համաձայնագիրը:

ԿԱՏԱՐՎԱԾ Է Աստանայում 2018 թվականի մայիսի 17-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, բելառուսերեն, ղազախերեն, ղրղզերեն, ռուսերեն, չինարեն և անգլերեն, ընդ որում՝ բոլոր տեքստերը հավասարազոր են: Որևէ տարաձայնություն առաջանալու դեպքում գերակայում է անգլերեն տեքստը:

Հայաստանի Հանրապետության կողմից՝

Բելառուսի Հանրապետության կողմից՝

Ղազախստանի Հանրապետության կողմից՝

Ղրղզստանի Հանրապետության կողմից՝

Ռուսաստանի Դաշնության կողմից՝

Եվրասիական տնտեսական միության կողմից՝

Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կողմից՝

## ՀԱՎԵԼՎԱԾ 1

## ՀԱՄԱՏԵՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵՎ ԿԱՊԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

*Ներկայացուցիչների վերաբերյալ ծանուցումը*

1. Յուրաքանչյուր Կողմից Համատեղ հանձնաժողովի համանախագահ նշանակելու և յուրաքանչյուր Կողմից Համատեղ հանձնաժողովում ներկայացուցիչներ նշանակելու մասին ծանուցումն ուղարկվում է սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ 90 օրվա ընթացքում: Կողմը կարող է փոխել Համատեղ հանձնաժողովում իր ներկայացուցիչներին և այդ մասին ծանուցել Համատեղ հանձնաժողովի հաջորդ նիստից ոչ ուշ, քան 30 օր առաջ:

*Հերթական և այլ նիստեր*

2. Համատեղ հանձնաժողովը հանդիպում է առնվազն տարին մեկ անգամ ԵԱՏՄ անդամ պետություններից որևէ մեկում և Չինաստանում՝ հաջորդաբար: Այլ նիստեր կարող են գումարվել Կողմերից յուրաքանչյուրի խնդրանքով՝ փոխադարձ համաձայնությամբ:

*Հերթական նիստերի ժամկետը և վայրը*

3. Համատեղ հանձնաժողովը յուրաքանչյուր հերթական նիստի ժամանակ որոշում է հաջորդ հերթական նիստի ժամկետը ու վայրը, եթե այլ որոշում չի կայացնում:

*Գումարումը*

4. Հերթական նիստի դեպքում՝ ոչ ուշ, քան 60 օր առաջ, իսկ այլ նիստերի դեպքում, եթե հնարավոր է, ոչ ուշ, քան 30 օր առաջ, ընդունող Կողմը ձգտում է մյուս Կողմին տեղեկացնել այդ նիստերի ժամկետի, վայրի ու նախնական օրակարգի մասին:

*Նախնական օրակարգը*

5. Ընդունող Կողմը պատրաստում է Համատեղ հանձնաժողովի նիստերի նախնական օրակարգը:

6. Համատեղ հանձնաժողովի հերթական նիստի նախնական օրակարգը պետք է պարունակի.

(a) բոլոր այն հարցերը, որոնք Համատեղ հանձնաժողովը նախորդ նիստերի ժամանակ որոշել է ընդգրկել դրանում, և

(b) սույն Համաձայնագրի Կողմերի կողմից առաջարկվող բոլոր հարցերը:

*Օրակարգի ընդունումը*

7. Յուրաքանչյուր նիստի սկզբում Համատեղ հանձնաժողովն ընդունում է նիստի օրակարգը:

*Փոփոխությունները և նոր հարցերը*

8. Համատեղ հանձնաժողովը կարող է իր նիստերի ժամանակ փոփոխել, հանել կամ ավելացնել օրակարգում ընդգրկված հարցերը, եթե այդպես է որոշվում ընդհանուր համաձայնությամբ (կոնսենսուսով):

*Համատեղ հանձնաժողով փաստաթղթեր ներկայացնելը*

9. Ծանուցումները, հարցումները և այլ փաստաթղթեր Համատեղ հանձնաժողով ներկայացվում են գրավոր:

*Աշխատանքային լեզուները*

10. Համատեղ հանձնաժողովի աշխատանքային լեզուն անգլերենն է:

11. Համատեղ հանձնաժողով ներկայացվող բոլոր ծանուցումները, հարցումները և այլ հաղորդումները պետք է կազմված լինեն անգլերենով, կամ չինարենով կամ ռուսերենով՝ դրանց համապատասխան անգլերեն

թարգմանություններով:

12. Համատեղ հանձնաժողովի նիստերի ժամանակ Համատեղ հանձնաժողով ներկայացվող բոլոր բանավոր հաղորդումները պետք է ներկայացվեն անգլերենով, կամ չինարենով կամ ռուսերենով՝ դրանց համապատասխան անգլերեն թարգմանություններով: Բանավոր հաղորդումների թարգմանության ծախսերը կրում է այդ հաղորդումները ներկայացնող Կողմը:

*Կապի ապահովման կենտրոնները*

13. Սույն Համաձայնագրի 12.2-րդ հոդվածին համապատասխան իր կապի ապահովման կենտրոնները նշանակելու մասին Չինաստանի Կառավարությունից ծանուցումն ուղարկվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողով, իսկ ԵԱՏՄ-ից և ԵԱՏՄ անդամ պետություններից իրենց կապի ապահովման կենտրոնները նշանակելու մասին ծանուցումն ուղարկվում է Չինաստանի Կառավարություն՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի միջոցով:

*Եզրափակիչ դրույթներ*

14. Անկախ վերը նշված դրույթներից՝ Կողմերը խորհրդակցությունների միջոցով կարող են փոխել ժամկետը կամ համաձայնության գալ այլ ժամկետի շուրջ, եթե վերը նշված դրույթներում նախատեսված ժամկետներն անհնար է ապահովել անկանխատեսելի հանգամանքների պատճառով: